

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

«Երբեք Չնմանիս Թշնամիիդ»

Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժը աւերներ գործեց այդ երկու երկիրներուն մէջ: Աղէտին գոհ գացին տասնեակ հազարաւոր մարդիկ՝ տարեց, կին, երեխայ, որոնք մնացին փլատակներու տակ: Անոնց մէջ էին նաեւ մէկ տասնեակէ աւելի Յայեր՝ երկու երկիրներուն մէջ: Աշխարհի տարբեր կողմերէն օգնութեան հասան աղէտեալներուն ու երկիրներ իրենց տարակարծութիւնները պահ մը մէկդի դնելով փութացին կատարելու իրենց մարդասիրական պարտականութիւնը:

Հայաստանի վարչապետը հեռաձայնային խօսակցութիւն ունեցաւ Թուրքիոյ եւ Սուրիոյ ղեկավարներուն հետ՝ պատրաստակամութիւն յայտնելով օգնութեան ձեռք մեկնելու երկրաշարժէն տուժողներուն: Այդ խօսակցութենէն ետք, Հայաստանի փրկարարական ջոկատները ուղեւորուեցան դէպի թուրքիա, իսկ կառավարութիւնը 100 թոն մարդասիրական օգնութիւն ուղարկեց հայկական բեռնատարներով, որոնք 35 տարուայ մէջ առաջին անգամ ըլլալով հատեցին սահմանին վրայ գտնուող Մարգարայի կամուրջը՝ ուղղուելով դէպի Թուրքիա:

Կառավարութեան այս քայլը միանշանակ չընդունուեցաւ Հայաստանի հանրային կարծիքին կողմէ: Ընկերային ցանցերուն վրայ ամենէն շատ տարածուած խօսքը դարձաւ՝ «Թուրքիա պայրաքտարներ կ'ուղարկէ մեր դէմ, իսկ մենք օգնութիւն»: Հասկնալի է հայութեան ցասումը. մեր ազգը ցեղասպանութեան ենթարկած ու մինչեւ օրս թշնամական կեցուածք որդեգրած երկրին օգնութիւն հասցնելու երեւոյթը դիւրին ըմբռնելի չէ շատերուն համար:

Միւս կողմէ սակայն, հարեւան երկրին մէջ տեղի ունեցած մարդկային աղէտին ի տես անտարբեր մնալը եւս յարկ չէ հայուն կարագրին: Մարդասիրական աջակցութիւնը պէտք է կարողանանք զանազանել քաղաքական դիրքորոշումներէն: Հայաստան իր այս քայլով ցոյց կու տայ թուրք ժողովուրդին եւ միջազգային հանրութեան, որ հակառակ Թուրքիոյ վարած հակահայ քաղաքականութեան Հայաստանը մարդասէր, բարի ու խաղաղասէր երկիր մըն է: Նման ազգի վերաբերմունք ցուցաբերելով խաբկանք չունինք որ, Թուրքիան պիտի փոխէ իր վարած քաղաքականութիւնը եւ կամ բանայ երկու երկիրներուն միջեւ փակ սահմանը: Պարզապէս պահի

Շար.ը էջ 6

ԵՄ Դիտորդական Առաքելութեան Տեղակայուող Հայ-Ատրպէյճանական Սահմանին Աշխարհաքաղաքական Ենթարկանդակութիւն Զուլնի. Փաշինեան

Ազգային ժողովին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ այն հարցին, թէ ինչո՞ւ Հայաստանը համաձայնեցաւ Եւրոմիութեան դիտորդական առաքելութիւն տեղակայել հայ-ատրպէյճանական սահմանին, իսկ ՀԱՊԿ դիտորդական առաքելութիւն՝ ոչ:

Աժ-ի մէջ կառավարութեան անդամներու հետ հարց ու պատասխանի ժամանակ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Հովհաննէս Գրիգորեան նշեց, որ ԵՄ դիտորդական առաքելութեան տեղակայման վերաբերեալ մամուլին մէջ տեղ գտան հրապարակումներ, որոշ պարագայի շահարկումներ այն մասին, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ ՀՀ կառավարութիւնը նախընտրեց ընդունիլ ԵՄ դիտորդական առաքելութիւնը, իսկ ՀԱՊԿ առաքելութիւնը՝ ոչ: Ըստ պատգամաւորին՝ որոշ շրջանակներ աւելի հեռու անգամ գացին՝ փորձելով աշխարհաքաղաքական երանգներ տալ թեմային: Գրիգորեան հետաքրքրուեցաւ վարչապետէն, թէ ինչ կարծիք ունի ան այս հարցին շուրջ:

Վարչապետը համաձայնեցաւ պատգամաւորի հետ, նշելով որ թեմային հետ կապուած բազմաթիւ թիւրըմբռնումներ կան, այդ



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Ազգային ժողովէն ներս

շարքին՝ Հայաստանի փորձագիտական շրջանին մէջ, որովհետեւ կը հարցնեն, թէ ինչպէ՞ս ստացուած է, որ ՀԱՊԿ դիտորդական առաքելութիւնը չի ժամաներ Հայաստան, իսկ Եւրոպական դիտորդական առաքելութիւնը կը ժամանէ:

«ՀԱՊԿ-ի պարագայում շատ յստակ ձեւակերպել ենք ինչիւր. քանի որ ՀԱՊԿ-ն ունի շատ մանրամասն նկարագրութիւններով փաստաթղթեր, այդ թւում՝ ճգնա-

ժամային իրավիճակների արձագանգման կանոնակարգը, որը ընդունուել է դեռեւս 2010 թուականին, որտեղ յստակ գրուած են գործողութիւնները, բայց, միեւնոյն ժամանակ, կայ յստակ ըմբռնում եւ հասկացութիւն ՀԱՊԿ պատասխանատուութեան գօտու մասին: Մենք ՀԱՊԿ-ից խնդրել ենք ամենակարեւոր սկզբունքային մի բան՝ ճշգրտել Հաւաքական Անվ-

Շար.ը էջ 6

Երկրաշարժին Հետեւանքով Թուրքիոյ Եւ Սուրիոյ Մէջ Զոհուած Են 13 Հայեր



Հայաստանէն Թուրքիա ուղարկուած մարդասիրական օգնութիւնը կանցնի սահմանը

Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած աւերիչ երկրաշարժին հետեւանքով զոհուած է 13 հայ: «Արմենփրես»-ի մամուլի սրահին մէջ հրաւիրուած ասուլիսին այս մասին յայտնեց ՀՀ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակի ռազմավարութիւններու մշակման բաժնի պետ Յովհաննէս Ալեքսանեանը:

«Առաջին օրերին տեղեկատուութիւնը տարբեր խողովակներով էր տեղ հասնում, եւ դժուար

էր ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելը: Արդէն կարող ենք նշել, որ Հայկում ունենք 2 գոհ՝ Միւրնա Միւսաբեան-Թէնէքեան, Ալպեր Թէնէքեան: Թուրքիայում զոհուել են Սամի, Արտա, Ալեքս Թապաչեանը, Մարիամ Քարաթաշը, Դշխուն Մերոպեան/Պալըքեանը, Արմիկ Մերոպեանը, Մերոպ Մերոպեանը, Պայծառ Սիլահլինը, Անթուան Հորոզը, Զիլան Տիգրիսը, Եոհաննայ

Շար.ը էջ 5

Ֆրանսա Եւ ԱՄ Անհրաժեշտ Կը Համարեն Լաչինի Միջանցքով Ազատ Տեղաշարժի Վերականգնումը

Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Բոլոնյան եւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Էնթոնի Պլինքըն «անհրաժեշտ կը համարեն այսպաղ վերականգնել ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով», որ արդէն շուրջ երկու ամիսէ արգելափակուած է Ատրպէյճանի կողմէ: Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ իրադրութեան ու հայ-ատրպէյճանական հակամարտութեան լուծման ուղղուած ջանքերու մասին Բոլոնյան եւ Պլինքընը խօսած են հեռախօսազրոյցի ընթացքին:

«Լեռնային Ղարաբաղի շրջափակման հետեւանքով ի յայտ եկած լրջագոյն մարդասիրական հետեւանքները անընդունելի են, եւ Ֆրանսան ու Միացեալ Նահանգները վարչապետ Փաշինեանի ու նախագահ Ալիեւի հետ շփոմաներու միջոցով, կը համատեղեն ջանքերը՝ վերջ տալու այս իրադրութեան», կ'ըսուի Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԽՆԴԻՐ Ե ԴՐՈՒԱԾ ՎԱՐԿԱՔԵԿԵԼ ԵՄ ԴԻՄՈՐՈՎԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայաստան» դաշինքի պատգամաւորը «պաշտօնական տուեալ» է համարում Ալիեւի գրպանային ՋԼՄ-ի haqqin.az-ի խմբագրի եւ Բաքվում ՌԴ դեսպանի ենթադրութիւնները.

ԵԼԵՆԱ ԱԶՍԵՆԱՆ

Ընդդիմութեան ներկայացուցիչները՝ ԱԺ բարձր ամպիոնից հնչող որոշ յայտարարութիւններ ակնյայտօրէն թելադրուում են արտաքին շահագրգիռ ուժերի կողմից եւ միտուած են բաւարարել նրանց պահանջները՝ կանխել, կանխարգելել, իսկ եթէ ոչ, ապա վարկաբեկել ՀՀ պետական եւ անվտանգային շահերին միտուած որոշակի գործընթացներ եւ այսպիսով սպասարկել օտար շահեր:

ՀՀ հարկատուների միջոցներով աշխատավարձ ստացող օպորտիւնիստ, փաստօրէն, գործում է նոյն այդ պետութեան քաղաքացիների շահերի շահերի դէմ՝ յայտնի հին հայկական սացուածքի տրամաբանութեամբ՝ «մեր քայն ուտում է, ուրիշի դրանք՝ հաշում»: Ընդդիմութեան եւ նրանց յանձնարարականներ իջեցնողների անհանգիստ շարժումները նկատելի են մասնաւորապէս ԵՄ դիտորդական առաքելութեան տեղակայման «գոյժի» ի յայտ գալուց յետոյ: Այդ փաստն ակնյայտօրէն կանգնել է նրանց կողորդին եւ ոչ մի կերպ չի մարսում՝ դրանից բխող հետեւանքներով: Հետեւանքների մասին՝ քիչ անց, իսկ մինչ այդ նշենք, որ դիտորդների ժամանումը ՀՀ տեղի է ունենում Լաչինի միջանցքի ճգնաժամի խորապատկերին, երբ ուստի խաղաղապահ զօրակազմը չի կարողանում իրացնել կամ միտուանաւոր չի իրականացնում իր առաքելութիւնը, ինչի հետեւանքով անխուսափելիօրէն տեղի է ունենում մի պրոցես, որը ընդունուած է անուանել «ուստի խաղաղապահների հեղինակազրկում»: Եւ չնայած ուստական կողմի՝ ժամանակ առ ժամանակ տրուող

հաւաստիացումներին, թէ՛ միջանցքը «առաջիկայում», «մօտ ժամանակներս» կը բացուի, խոստացուած բացումն այդպէս էլ տեղի չի ունենում: Իսկ միջանցքի փակ լինելու ամէն օրը, անխուսափելիօրէն, էլ աւելի է ընդգծում տարածաշրջանում ուստական ռազմական ներկայութեան հեղինակազրկման գործընթացը:

Եւ ահա, մինչ ուստական խաղաղապահ առաքելութիւնը օրաուր հեղինակազրկուած է չապաշրջափակուող միջանցքի պատճառով, ՀՀ-Ատրպէյճան սահմանին, առանց եւրոպական բիւրոկրատական քաջշուկների, տեղի է ունենում ԵՄ քաղաքացիական դիտորդական նոր՝ երկու տարի ժամկէտով առաքելութեան տեղակայում: ՌԴ-ից ի պատասխան հնչում է խանդի ու սպառնալիքի երանգաւորմամբ արձագանք, ՀԱՊԿ դիտորդները՝ «օրը վաղը» ռեժիմում տեղակայման մասին խոստում-հաւաստիացում եւ ինչպէս որ սպասուած էր, «կոնկուրենտ» առաքելութեանն ուղղուած վերաբերեալ յարձակումներ, որոնք ակնյայտօրէն մէկ կոնկրետ նպատակ են հետապնդում՝ որքան հնարաւոր է հեղինակազրկել այն, ներկայացնել «տարածաշրջան աշխարհաքաղաքական դիմակայութիւն բերելու», «առկայ հակասութիւնները սրելու» քօղի ներքոյ:

Այն, որ Ատրպէյճանը պէտք է լիներ ԵՄ առաքելութեան վրայ քար նետողներից մէկը, քանի որ նման ներկայութիւնը կապելու է իր՝ օկուպանտի ձեռքերն ու զսպելու է ախորժակը ՀՀ տարածքների նկատմամբ, տրամաբանական է: Այդ երկրում ՌԴ դեսպանն էլ «տոն տալով» «քար նետողին»՝ իր բաժին քարն է նետել ԵՄ առաքելութեան ուղղութեամբ: Պա-

տասխանելով Ալիեւի գրպանային ՋԼՄ-ի՝ Haqqin.az-ի գլխաւոր խմբագրի՝ «դիւանագիտական ազդերից ստացած» տեղեկութեանը, թէ ԵՄ առաքելութիւնը, որի կազմում կը լինի մինչեւ հարիւր դիտորդ, «ներառում է 70 ֆրանսացի ժանդարմ», ՌԴ դեսպանը հաստատել է «ժանդարմների» մասով տեղեկութիւնը: Ակնյայտ է, որ այդ լուրը ատրպէյճանական կողմին է փոխանցուել ուստական կողմից, որպէսզի հարցի ձեւով վերահասցէագրուի դեսպանին, որպէսզի վերջինս էլ իր հերթին հաստատի լուրն ու այսպիսով շրջանառութեան մէջ դրուի քաղաքացիական առաքելութեան «ոչ այնքան քաղաքացիական» լինելու, ռազմական կոմպոնենտ պարունակելու մասին հարցը: ՌԴ արտակարգ եւ լիազօր դեսպանի՝ Միխայիլ Բոչարնիկովի շահագրգռութիւնը՝ ԵՄ առաքելութեան կազմում «ժանդարմների առկայութեան» հարցը հենց Ատրպէյճանում հնչեցնելու մասով, հասկանալի է դառնում դեսպանի հետեւեալ յայտարարութեամբ՝ ԵՄ առաքելութիւնն ուղղուած է ՌԴ-ին կարգաւորման գործընթացից դուրս մղելուն: Պարոն դեսպանին, սակայն, պէտք է չիչեցնել ԵՄ ԱԳ խօսնակ Պետեր Ստանոյի պարզաբանումը՝ ԵՄ առաքելութիւնը քաղաքացիական է եւ այն կը ծառայի որպէս առանցքային տարր՝ աշակցելու հայատրպէյճանական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած ջանքերին, հետեւապէս ՌԴ-ն ակնյայտօրէն սխալ է հասկացել ԵՄ առաքելութեան նպատակը եւ շարունակում է սխալ գնահատել վերջինիս ներգրաւուածութիւնը տարածաշրջանում: «ԵՄ առաքելութիւնը մեկնարկել է ՀՀ իշխանութիւնների խնդրանքով եւ ազատ որոշմամբ: ԵՄ-ն, իհարկէ, այս հար-

ցով կապի մէջ է եղել նաեւ Ատրպէյճանի իշխանութիւնների հետ: ...ԵՄ-ն ստանձնեց այդ դերը երկու կողմերի համապատասխան խնդրանքից յետոյ», - նշել էր Ստանոն՝ յաւելելով, թէ չիշեալ առաքելութեան տեղակայումը ՌԴ-ի գործը չէ:

Եւ ահա, հայրենի ընդդիմութիւնը, հաւատարիմ իր հունարին եւ պատուիրատուների հրահանգին՝ վարկաբեկել «օտարածին առաքելութիւնը», վկայակոչում է ոչ թէ ԵՄ-ի պարզաբանումներն ու հաւաստիացումները չիշեալ առաքելութեան նպատակների մասին, այլ... տիրաժաւորում է ուստատրպէյճանական տանդեմի քարոզչական սաղորիչ թէգերը: Կարկառուն դաշնակցական, լոնտոններում կրթութիւնը շարունակած Արթուր Խաչատրեանն, օրինակ, այսօր ԱԺ բարձր ամպիոնից զբաղուած էր ուստատրպէյճանական քարոզչական «պասն» ընդունել-փոխանցելով եւ մէջբերում էր ժանդարմների մասին haqqin.az-ի խմբագրի էյնուլա Ֆաթուլաեւի եւ ուստ դեսպանի ենթադրութիւնները:

«Եւրոպայում ՀՀ-ին խեթ են նայում («խեթ նայել»-ը Նիկոլ Փաշինեանի՝ նախօրէի էլոյթի ձեւակերպումն է-խմբ.): Ոչ միայն խեթ են նայում, այլեւ

Շար.ը էջ 15

ԿՈՇՈՒԿՅԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՈՐՔՐ

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Սա սկզբունքային հարց է, պէտք է գնանք մինչեւ վերջ, յայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինեանը Ջերմուկում անցկացուած Հակակոռուպցիոն խորհրդի նիստի ընթացքում: Դրան մասնակցել են պետական պաշտօնեաներ, քաղաքացիական կառույցների ներկայացուցիչներ: Թեման հրատապ է դարձրել 2022 թուականին Հայաստանի կոռուպցիայի դէմ պայքարի համաթուր նուագումը: Նուագումն իհարկէ երեք կէտով է, սակայն հաշուի առնելով մի շարք հանգամանքներ, այդ թւում եւ 2018-ից յետոյ հնչող յայտարարութիւնները, անգամ շօշափելի առաջընթացի բացակայութիւնը Հայաստանում պէտք է լինի մտահոգիչ, ուր մնաց երեք կէտով նահանջը: Ի վերջոյ, հարկ է արձանագրել, որ 2018 թուականից յետոյ ձեւաւորուած քաղաքական իշխանութեան «գաղափարական» առանցքը ըստ էութեան հենց կոռուպցիայի դէմ պայքարն է, այսպէս ասած հակակոռուպցիականութիւնը, առաւել եւս, երբ իշխանութիւնը յայտարարել է «իզմերի» բացակայութեան մասին: Եւ հիմա, փաստօրէն, տեղի է ունենում նաեւ նահանջ

գլխաւոր «գաղափարական» առանցքից, այսինքն նաեւ «հակակոռուպցիոնիզմի» բացակայութեան տանող միտում: Ծայրայեղացնել անշուշտ պէտք է, սակայն հարցը բոլորովին այլ հարթութեան վրայ է, որովհետեւ որպէս կանոն ծայրայեղութիւնները ձեւաւորուած են ժամանակի ընթացքում, երբ խնդիրները եւ իրերը ժամանակի ընթացքում չեն կոչուած իրենց անունով: Իսկ այստեղ կայ առանցքային մի հանգամանք, որի մասին հարկ է խօսել:

Հայաստանում քաղաքական ռեֆորմացիայի բացակայութիւնը ըստ էութեան պահպանում է դեռեւս նախկին կառավարող համակարգի ժամանակ ձեւաւորուած՝ իշխանութեան բանաձեւի առանցքային «մոդուլը», որն է՝ կապիտալի եւ իշխանութեան «համադրելի» գոյութիւն: Այլ կերպ ասած, քաղաքական իշխանութեան դիրքերի ամրութիւնը էպպէս պայմանաւորուած է առկայ քաղաքական խնդիրներին համարժէք եւ համադրելի կապիտալի առկայութեամբ: Երբ այն չկայ, առաջնում են քաղաքական անկանխատեսելիութեան ռիսկեր: Դրա լուծումը քաղաքական համակարգի ռեֆորմացիան է, որը սակայն իր

հերթին պահանջում է նաեւ կառուպցիայի դէմ պայքար: Սակայն, այստեղ էլ ահա ի յայտ է գալիս իշխանութեան շարունակուող «բանաձեւի» հանգամանքը: Իսկ դրա շրջանակում, ներկայիս իշխանութիւնը պէտք է ձեւաւորի իր կապիտալի կայուն բազան, յատկապէս նկատի ունենալով այն, որ կապիտալի ահուելի բազայի վրայ է հիմնուած ընդդիմութիւնը՝ նախկին իշխանութիւնը: Այս յարաբերակցութիւնն ինքնին պահպանում է քաղաքական մոտիւացիաներ, որոնք իրենց հերթին բարձր են պահում կոռուպցիոն ռիսկը: Տեղի է ունենում երկփեղկում: Մի կողմից կոռուպցիայի դէմ պայքարը ըստ էութեան ներկայիս քաղաքական իշխանութեան «նոյնականացման քարտի» գործնականում միակ չափանիշն է, միւս կողմից տնտեսա-քաղաքական համակարգային իրողութիւններն այնպիսին են, որ բարձր է մնում քաղաքական իշխանութեան եւ կապիտալի համադրելիութեան «օբիեկտիւ» պահանջուածութիւնը, առնուազն այնքան, որքան է այսպէս ասած առաջատար ընդդիմութեան ու կապիտալի համադրուածութեան աստիճանը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

2022ԿԻՆ Հայաստանի Քաղաքացիութեան Համար Դիմած Է 25 Հազար Հայ

2022 թուականին Հայաստանի քաղաքացիութեան համար դիմած է 25 հազար հայ: «Արմենիան»-ի մամուլի սրահին մէջ հրաւիրուած ասուլիսի ընթացքին ՀՀ Սփիւռքի գործերու գլխավոր յանձնակատարի գրասենեակի ռազմավարութիւններու մշակման բաժնի պետ Յովհաննէս Ալեքսանեան նշեց, որ սա 1991 թուականէն ի վեր ամենամեծ ցուցանիշն է: 2018-2021 թուականներուն Հայաստանի քաղաքացիութիւն ձեռք բերած է շուրջ 40 հազար հայ:



Յովհաննէս Ալեքսանեան

նէր, բժիշկներ, իրաւաբաններ: «Յանկանում ենք նաեւ այս հարցը չքաղաքականացնել: Յաճախ նշուած է, որ դա պայմանաւորուած է պատերազմական գործողութիւններով: Ասեմ, որ հայրենադարձութեան լաւագոյն փորձ ունեցող երկրները միշտ փորձում են օգտագործել ճգնաժամային իրավիճակները, որոնք թույլ են տալիս աշխուժօրէն խթանել հայրենադարձութիւնը», ըսաւ Յովհաննէս Ալեքսանեանը: Խօսելով հայրենադարձներու խնդիրներուն մասին՝ Յովհաննէս Ալեքսանեանը նշեց, որ շրջանակը լայն է՝ երեխաները դպրոցներուն, մանկապարտէզներուն մէջ տեղաւորել, բնակարանային, անձնական բեռները տեղափոխելու հարց եւ այլն:

«Ի հարկէ, քաղաքացիութիւն ստանալը դեռ հայրենադարձութիւն չէ, սակայն գործընթացը սկսուած է հէնց դրանից: Դա առաջին եւ խոշոր քայլն է: Փորձը ցոյց է տալիս, որ նրանց զգալի մասը վերադառնում է Հայաստան: Հայրենադարձութիւնն այլընտրանք չունի պետութեան գարգացման համար», ըսաւ Յովհաննէս Ալեքսանեանը: ՀՀ քաղաքացիութեան համար դիմողներէն, հայրենադարձներէն շատերը Ռուսիայէն են, Սուրիայէն, Լիբանանէն եւ այլն: Անոր խօսքով՝ հայրենադարձները նոր մշակոյթ կը բերեն իրենց հետ՝ կրթական, աշխատանքային: Շատերը կը բանան առեւտրային ընկերութիւններ, իրենց գործընկերները կը բերեն: Կու գան մասնագէտներ, որոնք կը ներկայացնեն ծառայութիւններու ոլորտը, հիւրանոցային առեւտուրը, տեղեկատուական արհեստագիտութիւնները, շինարար-

Նախագահական Նստավայրին Մէջ Տեղի Ունեցած Է Նորանշանակ Նախարարներու Երդման Արարողութիւնը



Նախագահական Նստավայրին մէջ տեղի ունեցած նորանշանակ նախարարներու երդման արարողութիւնը

Նախագահական նստավայրին մէջ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ տեղի ունեցած է Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեանի, Էլեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեանի, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Ժաննա Անդրէասեանի եւ արդարադատութեան նախարար Գրիգոր Մինասեանի երդման արարողութիւնը: Նորանշանակ նախարարները, ընթացքով երդման բնագիրը, նշած են. «Յանուն համազգային նպատակների իրականացման եւ հայ-

րենիքի հզօրացման՝ երդուած եմ բարեխղճօրէն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտաւորութիւններս, պահպանել Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը եւ օրէնքները, նպաստել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ շահերի պահպանմանը, հաւատարիմ մնալ կառավարութեան անդամի բարձր կոչմանը»: Երդման արարողութեան աւարտին Նիկոլ Փաշինեանը եւ Վահագն Խաչատուրեանը շնորհաւորած են նախարարները՝ մաղթելով բեղմնաւոր ու արգասաբեր աշխատանք՝ ի շահ հայրենիքի եւ ժողովուրդին:

Դուրս Եկեք Քաղաքական Դաշտէն Եւ Ծանապարհ Բացեք Նոր Ընդդիմութեան Համար. Աժ Նախագահը՝ Ընդդիմադիրներուն

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան խորհրդարանական ընդդիմութեան չորրորեց դուրս գալ քաղաքական դաշտէն եւ ճանապարհ բանալ առողջ ուժերու համար:



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

Արձագանգելով նախորդ օրը Աժ ամպիոնէն «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Ռուստամեանի՝ նոր ընտրութիւններու մասին ելոյթին՝ Սիմոնեան նշեց, թէ լաւ է, որ ընդդիմութիւնը կը խօսի ընտրութիւններուն մասին: «Պատերազմից յետոյ ընտրութիւնների մասին խօսում էինք մենք, դուք խօսում էիք վազզէն Մանուկեանի մասին: Ի դէպ, ո՞ւր է վազզէն Մանուկեանը», ըսաւ Սիմոնեան:

Կով պիտի յայտնուի: Դիմելով ընդդիմադիրներուն՝ Աժ նախագահը ըսաւ. «Դուք պէտք է դուրս գաք քաղաքական դաշտից եւ ճանապարհ բացէք նոր ընդդիմութեան համար: Քանի դեռ դուք, «Պատիւ Ունեմ»-ը զբաղեցնում էք ընդդիմադիր դաշտը, դա ամենամեծ վնասն է ՀՀ-ին, դուրս եկէք քաղաքականութիւնից, դուք սպառուել էք ձեր քաղաքական օրակարգը՝ անընդհատ այդ նոյն սկաւառակը պտրտեցնելով, անընդհատ նոյն բաները մեր մասին ասելով: Հասկացանք, ասացիք դա: Դուրս եկէք, թողէք թող առողջ ուժերը գան: Հետագայում, եթէ մենք էլ ընտրութիւններում կը պարտուենք, իշխանութիւնը կը յանձնենք իրենց եւ հանգիստ սրտով կը հեռանանք, քանի որ մեր նպատակն է ՀՀ-ում մեր կողմից ներդրուած ազատ ընտրութիւններով, թափանցիկ ընտրութիւններով իշխանութիւնը փոխանցել մէկ այլ ուժի, շնորհաւորել այդ իշխանութեանը եւ հեռանալ: Բայց քանի դեռ դուք կաք, դա անհնար է դառնում»:

Աժ նախագահը վստահեցուց, որ իշխանութիւնն ու գիրքը ընտրողները կապի մէջ են՝ չորրորեց ընդդիմութեան իրենց ընտրողներուն մասին մտածել: Ան ընդդիմադիրները մեղադրեց երթերուն գումարով մարդ բերելու փորձերուն մէջ՝ ընդգծելով, որ այդ երթերուն քանակը չէր գերազանցեր 5-10 հազարը՝ այն պարագային, երբ ընդդիմութիւնը ընտրութիւններով 200 հազարէն աւելի ձայն հաւաքած էր:

Սիմոնեան վստահեցուց, որ իշխանութիւնը նոր ընտրութիւններու կայացման խնդիր չունի՝ կարծիք յայտնելով, որ Դաշնակցութիւնը հիմա պէտք է ձգտի նոր ընտրութիւններու: «Դաշնակցութիւնն առաջին անգամ այսպիսի մեծ կազմով Աժ-ում է յայտնուել: Ան վստահ է, որ իշխանութիւնը նոր ընտրութիւններու պարագային աւելի շատ ձայն ալ պիտի հաւաքէ, սակայն Դաշնակցութիւնը կա՛մ խորհրդարանին մէջ պիտի չյայտնուի, կա՛մ աւելի քիչ քանա-

Ս. Օհանեանի Եւ Արմէն Չարչեանի Նկատմամբ Յարուցուած Է Քրեական Հետապնդում



Սեյրան Օհանեանի եւ Արմէն Չարչեան

Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ Սէյրան Օհանեանի եւ Արմէն Չարչեանի նկատմամբ յարուցուած է հանրային քրեական հետապնդում: «Արմենպրես»-ի հետ զրոյցին այս մասին ըսած է ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինէ Մարտիրոսեանը: Ան նշած է, որ Սէյրան Օհանեանին մեղադրանք առաջադրուած է: Սէյրան Օհանեանը կը մեղադրուի այն բանով, որ օգտագործելով պաշտօնէական դիրքը՝

աջանձնապէս մեծ չափերով վատնում կատարած է (2 դրուագ), ինչպէս նաեւ անձնական այլ շահագրգռուածութենէ եւ խմբային շահերէ ելլելով՝ իր պաշտօնէական դիրքը ծառայութեան շահերուն հակառակ օգտագործած է, որ անգրուելութեամբ յառաջացուցած է ծանր հետեւանքներ (2 դրուագ): Արմէն Չարչեանը կը մեղադրուի հանրութեան յայտնի «հաց բերողի»՝ Արթուր Սարգսեանի գործով կեղծ բժշկական եզրակացութիւն տալու մէջ:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Խովանի Զեռ ՔՈՆարկած Է Լաչինի Միջանցքի Շրջափակման Զեռեւանքները



Փաշինեան կը հանդիպի ԵԱԳԿ Միջանցքի Խովանի ղուս համանախագահ Իկոր Խովանի հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ շարաքերութիւններու կարգաւորման աջակցելու հարցերով Ռուսիոյ արտաքին գործերու նախարարի յատուկ ներկայացուցիչ, ԵԱԳԿ Միջանցքի ղուս համանախագահ Իկոր Խովանի:

Զրուցակիցները անդրադարձած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին եւ անոր յաղթահարման ուղղուած քայլերուն:

Վարչապետ Փաշինեան ընդգծած է Ատրպէյճանի կողմէ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան հերթական խախտման փաստը եւ յայտարարութեամբ ստանձնած պարտաւորութիւնները լիարժէք իրականացման անհրաժեշտութիւնը:

Քննարկուած են նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ շարաքերութիւններու կարգաւորման հնարաւորութիւններուն ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրին վերաբերող հարցեր:

Խաղաղութեան Պայմանագրի Բնագրին Մէջ Ղարաբաղի Մասին Յիշատակում Կայ, Բայց Այդ Վերջնական Չէ. Արմէն Գրիգորեան

Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի բնագրին մէջ Ղարաբաղի մասին յիշատակում կայ, բայց այդ փաստաթուղթը վերջնական չէ, «Ազատութեան» հարցումին ի պատասխան տեղեկացբւց Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան:

Երեւանն ու Պաքուն հինգ ամիսէ կ'աշխատին խաղաղութեան պայմանագրի բնագրին վրայ՝ պարբերաբար գայն լրամշակելով եւ միմեանց փոխանցելով: Առ այսօր սակայն յայտնի չէ, թէ արդեօք կողմերը որեւէ համաձայնութեան եկած են այդ փաստաթուղթին շուրջ: Քննարկուող նախագիծը եւս չէ հրապարակուած:

«Ազատութեան» հարցումին, թէ այս պահին քննարկուող, մշակուող փաստաթուղթին մէջ Ղարաբաղի մասին յիշատակում կ'այ, թէ՛ չկայ, Գրիգորեան պատասխանած է. «Ղարաբաղի մասին յիշատակում կայ: Պէտք է հաշուի առնել, որ այդ փաստաթուղթը վերջնական չէ դեռ: Դա բանակցային գործընթաց է: Եւ գիտէք, յայտնի մօտեցում կայ բանակցութիւններում, որ եթէ ամէն ինչ համաձայնեցուած չի, դեռ ոչ մի բան համաձայնեցուած չի»:

Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը պարզաբանեց, թէ Հայաստանը կողմ է, որ միջազգային տեսանկի մեխանիզմի շրջանակին մէջ քննարկումներ տեղի ունենան Ստեփանակերտի եւ Պաքուի միջեւ: «Հայաստանը շարունակում է աշխատել միջազգային գործընկերների հետ, որպէսզի այդ մեխանիզմը կայանայ: Պաքուն մինչեւ այժմ մերժել է այս գաղափարը: Այս մեխանիզմին կարող է անդրադարձ լինել միջազգային այն պայմանագրում՝ խաղաղութեան պայմանագրում, որի շուրջ բանակցութիւններ են ընթանում»:



ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

«Ազատութեան» այն հարցումին, թէ արդեօք սկզբունքային է հայկական կողմին համար, որ որեւէ կերպ Ղարաբաղի հարցը արծարծուի այդ խաղաղութեան պայմանագրի փաստաթուղթին մէջ, Գրիգորեան ըսաւ. «Հայկական կողմի համար աւելի կարեւոր է միջազգային տեսանկի մեխանիզմի ստեղծումը, որի շրջանակներում Ստեփանակերտը եւ Պաքուն կը քննարկեն անվտանգութիւնը եւ իրաւունքները: Թէ դա ո՞ր ձեւաչափով կը կատարուի, դա չի առաջնայինը: Առաջնայինը դա մեխանիզմի ստեղծումն է»:

«Միջազգային Զանրութիւնը Պէտք Է Խօսքէն Անցնի Գործի». Արայիկ Յարութիւնեան

Պաշտօնական Ստեփանակերտը կոչ կ'ընէ միջազգային հանրութեան խօսքէն գործի անցնելու:

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը, տարածած յայտարարութեամբ, կը դիմէ ԵԱԳԿ Միջանցքի ղուս համանախագահող Ռուսիոյ, ԱՄՆ-ին եւ Ֆրանսային, ինչպէս նաեւ՝ միջազգային հանրութեան բոլոր անդամներուն՝ միասին կամ առանձին-առանձին արդիւնաւէտ միջոցներու ձեռնարկելու Արցախի կեանքի ճանապարհի բացման եւ նորանոր յանցագործութիւններու կանխման ուղղութեամբ:

Պաշտօնական Ստեփանակերտը նաեւ կը յորդորէ պատժամիջոցներ սահմանել Արցախի ժողովուրդին դէմ կատարուող յանցագործութիւններու բոլոր հեղինակներուն ու աջակիցներուն եւ Ատրպէյճանի պետութեան դէմ՝ ի թիւս այլ պատժամիջոցներու՝ արզիլելով անոնց մոտաքր սեփական տարածքներ եւ սառեցնելով իրենց երկիրներուն մէջ գտնուող շարժական եւ անշարժ գույքը:

«Ատրպէյճանի կողմից Արցախի ժողովրդի ցեղային գտման փորձը մտնում է մարդկութեան դէմ (erga omnes) յանցագործութիւնների իրաւական հասկացութեան մէջ: Դրա կանխումը բարոյական, իրաւական եւ քաղաքական պարտաւորութիւն է, որը պարտադիր է Միացեալ Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութիւնը ստորագրած բոլոր կողմերի համար: Ուստի, միջազգային հանրութեան իւրաքանչիւր անդամի պարտաւորութիւնն է առաւելագոյնը կատարել նաեւ Արցախի ժողովրդի պաշտպանութեան եւ սեփական հայրենիքում արժանապատուօրէն ապրելու համար», ըս-



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

ուած է Արցախի նախագահի յայտարարութեան մէջ:

Ողջունելով բազմաթիւ երկիրներու գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններու, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններու յստակ կոչերը Ատրպէյճանին՝ անյապաղ ու անվերապահ կերպով վերացնելու շրջափակումը՝ Արայիկ Յարութիւնեան կ'ընդգծէ, որ «այդ պահանջներն ու դիրքորոշումները, սակայն, քիչ ազդեցութիւն կ'ունենապ Ատրպէյճանի մոլեռանդ ու ատելութեամբ լեցուն անգիջողականութեան պայմաններուն մէջ»:

«Ահա թէ ինչու միջազգային հանրութիւնը պէտք է խօսքից անցնի գործի, ինչպէս նա վարում է այլ տարածաշրջաններում՝ ցեղասպանութեան վաղ ասպանագող նշանների առկայութեան դէպքում», մասնաւորապէս նշած է Արցախի նախագահը:

Ստեփանակերտէն Ոչ Կը Զերքեն, Ոչ Ալ Կը Զաստատեն Լուրերը, Թէ Արցախի Նախագահն Ու Պետական Նախարարը Մոսկուա Գացած Են

Արցախի նախագահն ու պետական նախարարը շրջափակումը ճեղքած ու Մոսկուա գացած են. այս տեղեկատուութիւնը կը շրջանառուի, առանց հերքման կամ հաստատման:

«Մամուլում եղած այդ բովանդակութեամբ լուրերը չենք մեկնաբանում», «Ազատութեան» ըսած է Արցախի նախագահի մամուլի խօսնակ Լուսինէ Աւանեսեանը:

Արցախի նախագահի մամուլ խօսնակը տեղեկութիւնը չի մեկնաբաներ, կառավարութեան լրատուականը նոյնպէս: Թէ՛ Արայիկ Յարութիւնեանի ու թէ՛ պետական նախարարին լրատուականները չեն ալ հերքեր: Արցախցի ընդդիմադիր Տիգրան Պետրոսեանի տեղեկութեամբ՝ Արայիկ Յարութիւնեանը արդէն գացած է կամ, իսկ Ռուբէն Վարդանեանը դեռ Մոսկուա է:

Թէ ի՞նչ ճանապարհով, Պետրոսեանը պատասխանեց. «Մի գուցէ ռուս խաղաղապահների կամ կարմիր խաչով է դուրս եկել,

յստակ չեմ կարող ասել, բայց որ այստեղ չի գտնում, դա իրականութիւն է»:

Նախագահ-պետական նախարար խմորումներ են, ըստ Պետրոսեանի, այդ ալ իրենց ոչ միասին, այլ հերթով տարած է Մոսկուա:

«Մենամարտ է գնում, այսպէս ասեմ, Արայիկ Յարութիւնեանը, որ գնաց-եկաւ, ինքը աշխոյժ տարբեր շրջանակների հետ հանդիպումներ է անցկացնում եւ այդ ամբողջ հանդիպումները միտում են նրան, որպէսզի Ռուբէնին հանեն այստեղից», ընդգծեց ան:

Տիգրան Պետրոսեան կ'ըսէ, որ այժմ Յարութիւնեանի խմբակիցները լուրեր կը տարածեն, որ Ռուբէն Վարդանեանը կ'մ պիտի չվերադառնայ, կ'մ պիտի վերադառնայ հրաժարականի թուղթը ձեռքին. «Տեղեկութիւններ ունեմ, որ Նիկոլ Փաշինեանի հետ էլ է հանդիպել ու տեղեկութիւններ ունեմ, որ Նիկոլ Փաշինեանն էլ է դէմ Ռուբէն Վարդանեանին»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՇԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԸՆԿԵՐՈՒԽԻ ԱՆԻ ԵՓԻՐԵՄԵԱՆ Այցելեց «Մասիսի» Խմբագրատուն




ՄԴՀԿ Լիբանանի պաշտօնաթերթ՝ «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի Ընկերուհի Անի Եփրեմեան այցելեց «Մասիս» շաբաթաթերթի խմբագրատուն, ուր հանդիպում ունեցավ խմբագրական կազմի անդամներուն հետ:

Ընկերուհի Եփրեմեան տեղեկութիւններ փոխանցեց Լիբանանահայ մամուլի ներկայիս դիմագրաւած դժուարութիւններու մասին՝ երկրէն ներս տիրող տնտեսական սուր տագնապին պատճառաւ:

Տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում՝ Հնչակեան մամուլի տարբեր օրկաններուն միջեւ համագործակցութիւնը զարգացնելու կարեւորութեան մասին:

Հ.Մ.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը Գումեց Սահը Մեսրոպեան Ընտանիքի Երեք Անդամներուն



Երկրաշարժէն զոհուած Մեսրոպեան ընտանիքի երեք անդամները

Հայ Մարմնամարզական Միութեան՝ Հ.Մ.Մ-ի կեդրոնական վարչութեան հրապարակած հաղորդագրութիւնը խոր կսկիծով կը գուժէ երկրաշարժի աղէտի պատճառով, իսկէնտէրունի մէջ որոնողական աշխատանքներու հետեւանքով գտնուած դիակները՝

Հայկալի Հ.Մ.Մ-ի նախկին Տիկնաց Վարչութեան Ատենապետուհի, Դշխուն Մեսրոպեանի (Ծնեալ 1953) եւ իր երկու զաւակները Արմիկի (1978) եւ Մեսրոպի (1985) որոնք եղած են Հ.Մ.Մ-ի սկաուտներ եւ Արմիկը Նոր Սերունդի պարախումբի անդամ:

Երկրաշարժին Հետեւանքով Թուրքիոյ Եւ Սուրիոյ Մէջ Զոհուած ԵՆ 13 Հայեր

Շարունակուած էջ 1-էն

Գարոլինա Գափը», ըսաւ Յովհաննէս Ալեքսանեանը:

Կան նաեւ վիրաւորներ: Մէկ մասը վիրահատուած է եւ բուժում կը ստանայ, միւս մասը թեթեւ վնասուածքներ ստացած է: Հայկական հաստատութիւնները եւս վնասուած են, զգալի տուժած են յտակապէս Սուրիոյ տարածքին: Կը ճշդուի ճշգրիտ վնասին չափը, այդ հաստատութիւններուն հետագայ օգտագործելիութեան հնարաւորութիւնը:

շրջանակներ, ի սէր թուրք-ատրպէյճանական յարաբերութիւններու կը փորձեն «գաղտնի պահել այս իրողութիւնը, այլեւ յստակ է որ սառուցք սկսած է հալիլ: Թուրքիա այն երկիրն է եւ Ա-Գէ-Փէ այն իշխանութիւնն է, որ չի մոռնար դժուար պահուն կատարուած օգնութիւնը, մարդասիրական դրսեւորումները, ուստի կը սիրենք յուսալ, որ այս բոլորը պիտի նպաստեն հաշտութեան գործընթացին:

Հայաստան 100 Թոն Օգնութիւն Ուղարկեց Երկրաշարժի Աղիտեալներուն

Հայաստանը օգնութիւն տրամադրած է ինչպէս Սուրիոյ, այնպէս ալ Թուրքիոյ: Ուղարկուած են փրկարարական ջոկատներ, մարդասիրական օգնութիւն: Յովհաննէս Ալեքսանեանը տեղեկացուց, որ շատ հայրենակիցներ դիմած են Սփիւռքի յանձնակատարին զրասենեակ հանգանակութեան համար:

Շաբաթ օր 100 թոն մարդասիրական օգնութիւն ուղարկուեցաւ Թուրքիոյ: Բոլորս միասին դիտեցինք տեսանիւթերն ու լուսանկարները: Տեսանք թէ ինչպէս 30 տարի փակ մնալէ ետք, այս ծանր օրերուն բացուեցաւ Մարգարա-Ալիճան սահմանային անցակէտը եւ հինգ բեռնատարներ անցան սահմանը մուտք գործեցին Ըղտը, հոնկէ հասնելու համար աղէտի գօտի:

Տեղական հեռատեսիլի կայաններուն մեծ մասը լուծութիւն պահեց այս մասին, միայն էմթիվի եւ մէկ երկու կայաններ հաղորդեցին լուրը, չիչեցնելով նաեւ որ Հայաստանի փրկարարներ եւս կան աղէտի գօտիին վրայ: Բայց ինչ ալ որ ըլլայ, որքան որ կարգ մը

Առաջին արձագանգները սպասցնել չտուին հայ-թրքական բանացկութիւններու թուրք յատուկ ներկայացուցիչ Մէրտար Գըլըճ, բեռնատարներու գալն ընդամէնը երկու ժամ չետոյ, շնորհակալական խօսք ուղղեց Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեանին ու իր հայ պաշտօնակից Ռուբէն Ռուբինեանին:

«Շնորհակալ եմ ձեր այն ջանքերուն համար, որոնց շնորհիւ իրականացաւ այս ամէնը: Ես մ իշտ պիտի յիշեմ այն առատաձեռն օգնութիւնը, զոր Հայաստանի ժողովուրդը ուղարկեց աղէտի գօտի, օգնելու համար երկրաշարժէն տուժած շրջաններու աղիտեալներու եւ թեթեւցնելու համար անոնց տառապանքը», գրեց Գըլըճ: Ան յիշեցուց որ փրկարարներ եւ թէքնիք օգնութիւն ուղարկելու հետ միասին, Հայաստան հինգ բեռնատարներով 100 թոն ուտելիք, ջուր, դեղորայք եւ առաջին անհրաժեշտութեան այլ պարագաներ ուղարկեց աղէտի գօտի:

Հայաստանի փրկարարներու 27 հոգինոց ջոկատը հայ-թուրք եւ ամերիկացի փրկարարներ, միասնաբար յաջողած են Ատրեամանի փրկարարներէն երեք հոգի ողջ դուրս հանել: Անոնք ձեռքի եւ ոտքի բեկումներ ունեցած են բայց անոնց կեանքի վտանգ չի սպառնար:

Սուրիա Գործուղուած Հայ Փրկարարները Կը Վերադառնան Հայրենիք



Սուրիա գործուղուած Հայաստանի փրկարարական ջոկատը

Սուրիա գործուղուած Հայաստանի փրկարարական ջոկատը աւարտած է իր առաքելութիւնը եւ կը վերադառնայ հայրենիք: Այս մասին յայտնած է Հայկալի մէջ Հայաստանի Գլխաւոր հիւպատոսութիւնը:

«Հայկալ ժամանած փրկարարական խումբը աւարտելով իր առաքելութիւնը վերադարձաւ հայրենիք», ըսուած է հիւպատոսութեան Ֆէյսապուրի էջի հրապարակման մէջ:

Սուրիոյ մէջ տեղի ունեցած աղէտալի երկրաշարժէն չետոյ Հայաստանը 29 հոգիէ բաղկացած փրկարարական խումբ ուղարկած էր Սուրիա:

Արցախի Մէջ Սահմանադրութեան Փոփոխութենէն Յետոյ Նախագահը Պիտի Ընտրուի Ազգային Ժողովին Կողմէ

Ղեկավարուելով Արցախի Հանրապետութեան Սահմանադրութեան 162-րդ յօդուածի 2-րդ մասով՝ Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը ստորագրած է հրամանագիր, համաձայն որուն՝ նախաձեռնուած է Սահմանադրութեան փոփոխութեան գործընթաց՝ ռազմական դրութեան ժամանակ Հանրապետութեան նախագահի պաշտօնը թափուր մնալու պարագային Ազգային ժողովին կողմէ նախագահի ընտրութեան եւ անոր առանձնապատկութիւններուն վերաբերեալ:

Ըստ Արցախի նախագահի աշխատակազմին տարածած հաղորդագրութեան, Փետրուար 13-ին Արցախի Սահմանադրութեան փոփոխութեան նախագիծը ներկայացուած է Ազգային ժողովի քննարկման:

Առաջին Անգամ Մենք Ունենք Եւ Դրական Միգրացիոն Եւ Դրական Բնական Յաւելած

ՌՈՋԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Lragir.am-ի գրուցակիցն է ժողովրդագէտ, ՄԱՀՀԻ փորձագէտ Արտակ Մարկոսեանը

Պարոն Մարկոսեան, 2022 թուականին 33 մշտական բնակչութեան թիւն աւելացել 15.4 հազար մարդով: Ինչո՞վ է պայմանաւորուած սա:

Սա ձեւաւորուել է դրական բնական յաւելածի՝ 9.5 հազար մարդ եւ դրական միգրացիոն սալդոյի՝ 5.9 հազար մարդ արդիւնքում: Եթէ վերլուծուած ենք, 1991 թուականից մինչ օրս ընդամենը երկու տարի ենք ունեցել, երբ մշտական բնակչութեան թիւը չի նուազել: Նման արձանագրում եղել է 2012 թուականին, բայց այն ժամանակ մի առանձնայատկութիւն կար՝ բնակչութեան աճը եղել էր ի հաշիւ բնական յաւելածի: Այն ժամանակ միգրացիոն սալդոն բացասական էր եղել: Այս տարուայ առանձնայատկութիւնն այն է, որ, այո, իսկապէս առաջին անգամ մենք ունենք եւ դրական միգրացիոն սալդո, եւ դրական բնական յաւելած: Բնականաբար, 2020 թուականը չենք հաշուում, քանի որ կորոնավիրուսի հետեւանքով սահմանները փակ էին: Եւ դրա արդիւնքում՝ մշտական բնակչութեան թիւը 15 400-ով աճել է:

Նախորդ տարի Ռուսաստանից դէպի Յայաստան մեծ հոսք է արձանագրուել, կարող ենք ասել, որ մշտական բնակչութեան թիւի աճը մտել մեր հաշիւին է, որ ՌԴ հայերը Յայաստանի քաղաքացիութիւն են ստացել: Մենք գիտենք, որ քաղաքացիութիւն ստանալու դիմումների մեծ աճ կար:

Քաղաքացիութիւն ստանալու այդ դիմումներն աւելի շատ են, քան միգրացիոն սալդոն: Վիճակագրական կոմիտէն յատուկ մեթոդաբանութիւն ունի, որով հաշուարկում է միգրացիոն սալդոն, եւ, բնականաբար, այդ գործօնը եւս ազդեցութիւն ունեցել է: Բայց ընդհանուր առմամբ վերջին տարիներին տենդենց կայ, միգրացիոն բացասական 2018 թուականից սկսել է նուազել: Ոչ թէ սահմանաչին անցակէտերով ելքի ու մուտքի ցուցանիշը, այլ հենց միգրացիոն սալդոն սկսել է բաւական լուրջ նուազել: Պէտք է հաշուի առնել, որ 2020 թուականից մենք լուրջ փորձութիւնների միջով ենք անցել, եւ այս ցուցանիշը պէտք է ստիպի, որպէսզի աւելի ճիշտ ու թիրախային քաղաքականութիւն վարուի: Եթէ լուծուի նաեւ մեր անվտանգ-



գութեան միջավայրի բարելաւման հարցը, ապա աւելի լուրջ հոսք կ'ապահովուի: Չնայած առկայ խնդիրներին, Հայաստանը գրաւիչ երկիր է նաեւ օտարազգիների համար:

Ազգութեամբ ռուսների հոսքը կարող է ազդել մշտական բնակչութեան թիւի աճի վրայ:

Ոչ, ազգութեամբ ռուսների հաշուին չի կարող այս թիւն աճել: Իրենք առկայ բնակչութեան մէջ մարդահամարի ժամանակ հաշուառուել են, բայց մշտական բնակչութեան թիւի հաշուումն ժամանակ՝ ոչ:

Բնական յաւելածի այս ցուցանիշը ինչպէ՞ս էք գնահատում, ի՞նչ միտում է նկատուում:

2022 թուականին ծնունդների թիւի նուազում ունենք, մօտ 290-ով նուազել են, բայց պէտք է հաշուի առնենք, որ կորոնավիրուսը եւ անվտանգութեան հարցերը լուրջ ազդեցութիւն չեն ունեցել ծնելիութեան ցուցանիշի վրայ: Կորոնավիրուսի հետեւանքով զարգացած երկրներում ծնելիութեան լուրջ անկում է գրանցուել՝ ԱՄՆ-ում, այլ երկրներում: Բայց Հայաստանում 2020 թուականին 2019-ի համեմատ ունեցանք աճ, 2021 թուականին եւս աճ արձանագրուեց: 2022 թուականին նուազում կայ, բայց ցուցանիշը հաւասար է 2020 թուականի ցուցանիշին: Հայաստանում 2018 թուականից յետոյ մօտ 36 500-ի շրջանակներում ենք պահում ծնելիութեան տարեկան աճը: Կայունութիւնը եւս լաւ է, որովհետեւ կարող էր նոյնիսկ անկում լինել: Այն ծրագրերը, որոնք իրականացուած են՝ ուղղուած ծնելիութեան խթանմանը, տալիս են արդիւնք: Ավտանգութեան միջավայրի եւ որոշ հարցերի լուծման պայմաններում աւելի լուրջ աճեր կ'ունենանք:

Խաղաղապահները 25 Թոն Մարդասիրական Օգնութիւն Տեղափոխած Եւ Ստեփանակերտ

Ռուսական խաղաղապահ զօրախումբի զինուորները Ստեփանակերտի կաթնամթերքի գործարանին փոխանցած են 25 թոն մարդասիրական օգնութիւն: Այս մասին կը հաղորդէ խաղաղապահներու թեւեկրամեան ալիքը:

«Ռուսական խաղաղապահ զօ-

րախումբի զինուորները «հայեր միացէք» միջազգային բարեգործական կազմակերպութեան հետ համատեղ Լեռնային Ղարաբաղ տեղափոխած եւ Ստեփանակերտի կաթնամթերքի գործարանին փոխանցած են 25 թոն մարդասիրական օգնութիւն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ԵՄ Դիտորդական Առաքելութեան Տեղակայումը

Շարունակուած էջ 1-էն

տանգութեան Պայմանագրի կազմակերպութեան պատասխանատուութեան գօտին Հայաստանի Հանրապետութիւնում: Այսինքն՝ մեզ ասել իրենց պատկերացումը, թէ ո՞րն է Հայաստանի Հանրապետութիւնը: Մենք այս հարցի յստակ պատասխանը չենք ստացել: Միւս կողմից՝ ինչո՞ւ է հնարաւոր դրածել Եւրոմիութեան քաղաքացիական առաքելութեան գործուղումը, որովհետեւ Փրակի մէջ տեղի ունեցած քառակողմ հանդիպման արդիւնքում Եւրոմիութիւնը յստակ գծագրել է, այդ թուում՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի մասնակցութեամբ եւ համաձայնութեամբ, թէ որն է Հայաստանի Հանրապետութիւնը: Այսինքն՝ իրենք ասել են, որ մեր պատկերացմամբ Հայաստանի Հանրապետութեան քարտէզը սա է կամ մենք ենք ասել, նրանք ընդունել են ի գիտութիւն եւ հաստատել են: Իրենք գալիս են այդ տարածքը վերահասկողութիւն անելու, դիտելու», պարզաբանեց վարչապետը:

Վարչապետը ընդգծեց, որ առանց տարածքի մասին պատկերացման դիտորդական առաքելութիւնը պիտի ըլլայ տարօրինակ, որովհետեւ իրենց համար պարզ է, թէ իրենք ինչ պիտի դիտարկեն:

«Հարցը առաջացել է այն իրավիճակից, երբ Ատրպէյճանը բռնազրաւել է Հայաստանի Հանրապետութեան տարածքները: Եթէ որեւէ առաքելութիւն չգիտի, թէ որն է Հայաստանի Հանրապետութեան տարածքը, ինչպէ՞ս է ինքը դիտարկելու՝ բռնազրաւուած է Հայաստանի Հանրապետութեան տարածքը, թէ՞ ոչ: Սա ամենակարեւոր խնդիրն է», ըսաւ վարչապետը:

Փաշինեան յայտնեց նաեւ, որ մինչեւ Եւրոմիութեան դիտորդական առաքելութեան տեղակայումը

մը՝ Ատրպէյճանը արեւմտեան հարթակներուն մէջ իր նախաարձակ գործողութիւնները ընդգէմ Հայաստանի կը բացատրէր անով, որ Հայաստանի Հանրապետութեան վարչապետը աւելի ու աւելի շատ Ռուսիոյ գործեր կը տեղակայէ Հայաստան-Ատրպէյճան սահմանին եւ կը պատրաստուի հայ-ռուսական համատեղ արձակուամի Ատրպէյճանի դէմ, իսկ Ատրպէյճանը իր արձակուամներով պարզապէս կը փորձէ շատ թէ քիչ հաւասարակշռել իրավիճակը, իր խոցելիութիւնները կառավարելու համար:

«Այս գործընթացը շարունակուած էր: Ընդ որում, արդէն ասել եմ, որ Արեւմուտքում փորձ էր արուած Հայաստանը ներկայացնել որպէս «Ռուսաստանի նախաարձակ քաղաքականութեան» մասնակից, իսկ Ռուսաստանում փորձ էր արուած ներկայացնել որպէս արեւմտեան դաւադրութեան մասնակից: Քանի որ Ռուսաստանի գործընկերները տեղում ունէին ներկայացուցիչներ եւ Արեւմտեան մեր գործընկերները արդէն սկսել էին մեզ խէթ նայել, ասելով, թէ դուք փաստօրէն պատրաստուած էք նախաարձակ գործողութիւնների, որովհետեւ այնտեղ ռուսական եւ հայկական գործերի մեծ կուտակումներ կան, պատրաստուած էք արձակուել Ատրպէյճանի վրայ, խեղճ ատրպէյճանցիները ստիպուած բարձունքներ են ուզում գրաւել, ցանկանալով հաւասարակշռել իրավիճակը: Հասաստալով, որ շատ մեծ ազդեւորներ են ծախսուած դրա վրայ, սասցինք՝ շատ լաւ, եկէք դիտարկէք այդ ամէն ինչը իրականութեանը համապատասխանում է, թէ՞ ոչ: Անկիւնաքարային դրոյթը նա է, որ աշխարհաքաղաքական ենթաբովանդակութիւն, բնականաբար, այս ամէն ինչում չկայ: Կայ յստակ օրակարգ, կայ յստակ հարց, որը փորձում ենք լուծել», եզրափակեց Փաշինեան:

«Երբեք Չնմանիս Թշնամիիդ»

Շարունակուած էջ 1-էն

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

In collaboration with GUILIGIAN BENEVOLENT FOUNDATION - USA

Please donate now at:

AEBU.ORG/ALEPPO

You may also send your donations by check to: AEBU 1060 N. Allen Avenue Pasadena CA 91104

Վարդանանցի Ոգին



ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Յամի Տեառն 301-ին 451 թուականներու միջև երկարող 150 տարիները՝ հայոց պատմութեան ամենէն բախտորոշ ժամանակաշրջաններէն մէկն է: Այս շրջանին երեք կարեւոր դէպքեր ճակատագրական դեր ունեցան մեր ազգային կեանքին մէջ: Անոնցմէ առաջինն էր Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակուիլը 301 թուականին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ Տրդատ Թագաւորի նախաձեռնութեամբ: Քրիստոնէութեան պետական կրօն դառնալը Հայաստանի մէջ խիստ բախտորոշ ազդեցութիւն ունեցաւ մեր հոգեւոր, ազգային, քաղաքական, ընտանեկան, ընկերային եւ մշակութային կեանքին վրայ: Ան մեր ժողովուրդը օժտեց զօրեղ նկարագրով եւ զայն կապեց արեւմտեան քաղաքակրթութեան:

Երկրորդ կարեւոր դէպքն է հայ գիրերու գիւտը՝ 406 թուականին Մեսրոպ Վարդապետ Մաշտոցի կողմէ: Գիրերու գիւտը հայ ազգը օժտեց իր լեզուն արտայայտելու ուրոյն նշանագիրերով, որ հօր միջոց մը հանդիսացաւ մեր ազգային գոյութիւնը մշտնջենաւորելու: Շնորհիւ հայ այբուբենին զարգացան եւ ճոխացան հայ գրականութիւնն եւ դպրութիւնը եւ հայ ազգը ապրեցաւ իր լուսաւորութեան ամենէն բեղուն Ոսկեդարը: Քրիստոնէական հաւատքը միաձուլուած մեր մշակութիւնը ընձերած բարիքներուն հետ մեծապէս նպաստեց մեր ազգային նկարագրին ու անհատականութեան կերտումին:

Երրորդ ճակատագրական դէպքը մեր պատմութեան դասական այդ մէկ ու կէս դարու ժամանակաշրջանին եղաւ Վարդանանց հերոսամարտը՝ 451 թուականին: Այս պատերազմը եղաւ փորձաքար մեր ազգային նկարագրի տոկոսութեան եւ մարմնացումը մեր տոհմային արիւթեան:

Այո՛, Վարդանանց պատերազմը խորհրդանշան է հայ ժողովուրդի հերոսական պայքարին ընդդէմ անոնց՝ որոնք կը սպառնան իր խղճի, հաւատքի եւ ազգային ինքնութեանը թեւեւ եւ ազատութեան:

Պատերազմը տեղի ունեցաւ Մայիս 26, 451 թուականին հետեւեալ իրադարձութիւններէն ետք: 387 թուականին, այդ ժամանակուայ երկու ընդակից մեծ կայսրութիւններ, Բիւզանդիոն եւ Պարսկաստան, յետ երկարատեւ պարբերական պատերազմներու, համաձայնեցան իրենց միջեւ բաժնել Հայաստանը:

Բիւզանդիոն անմիջապէս վերջ

դրաւ իր գերիշխանութեան ներքեւ գտնուող հայկական երկրամասին՝ զայն դարձնելով իր կայսրութեան նահանգներէն մէկը: Իսկ Պարսկաստան թէեւ պահեց հայկական Արշակունեաց Թագաւորութիւնը՝ ենթակա իր գերիշխանութեան, անոր վերջ տուաւ 428 թուականին Վրամ թագաւորի (420-428) գահակալութեան վերջին տարին: Այս ձեւով Հայաստան կորսնցուց իր ներքին ինքնավարութիւնը:

Վրամէն ետք Յագկերտ Բ-ի (438-457) գահակալութիւնը չափազանց աննպաստ հունի մը մէջ կը դնէր հայ-պարսկական յարաբերութիւնները: Յագկերտ աշխարհատիրական փառատենչութիւններ ունեցող մէկն էր: Ան կը ծրագրէր իր տէրութեան ներքեւ գտնուող ազգութիւնները լուծարքի ընթացքի եւ ապա որպէս միաձույլ պետութեան մը ղեկավարը, իր սահմանները ընդարձակել: Ան յատկապէս ի մտի ունէր իր երկրի մրցակից Բիւզանդիոնը տապալել եւ դառնալ միահեծան աշխարհակալը գերզօր պետութեան մը: Այդ ծրագիրը յաջողցնելու համար Յագկերտ անհրաժեշտ նկատեց իր գերիշխանութեան ներքեւ գտնուող ազգութիւններուն պարտադրել իր ազգի կրօնը, պարսից Զրադաշտական (Մագտէական) կրօնը:

Ահա այդ առաջադրութեամբ էր, որ Յագկերտ իր հպատակութեան տակ գտնուող Հայաստանի մեծամեծներուն հրամանագիր մը կը զրկէր, ըստ որուն հայեր պէտք էր ուրանային իրենց Քրիստոնէական հաւատքը եւ ընդունէին Զրադաշտականութիւնը: Այս արքայական հրամանագիրը լուրջ երկընտրանքի մը առջեւ կը դնէր հիզուրդը դարու հայ ժողովուրդը: Կամ պէտք էր ուրանալ Քրիստոնէութիւնը շարունակելու իր բնական կեանքը, որուն հետեւանքը պիտի ըլլար ազգովին պարսկանալ եւ կամ ալ Քրիստոնէական հաւատքի եւ հայրենիքի սիրոյն յանձն առնել կամաւոր նահատակութիւնը:

Հինգերորդ դարու հայութիւնը այդ գոյգ մահերէն ընտրեց կամաւոր մարտիրոսացումը, այդ մահուան մէջ տեսնելով ցեղին անմահութիւնը: Արդ, ի պատասխան Յագկերտի հրամանագրին, հայեկեղեցականներ եւ յայտնի նախարարներ ժողով գումարեցին Արտաշատ քաղաքի մէջ եւ յայտարարեցին. «Այս հաւատքէն ոչ ոք կրնան խախտել մեզ, ոչ հրեշտակները, ոչ մարդիկ, ոչ սուրբ, եւ ոչ ալ հուրը եւ ոչ ալ ուրիշ դառն հարուածներ»:

Շար.ը էջ 15

Որպէս Անգլիական Հանճարի Լիազօր Դեսպան՝ Հայուրեան Սէջ



«Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթէ մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կը նշանակի տգէտ է, եթէ չի հասկանում, կը նշանակի՝ տհաս, եթէ մի լեզու նրա վրայ չի գալիս, կը նշանակի տկար է...»:
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՅԱԿՈՒ ՍՐԱՊԵԱՆ

Գուցէ լինեն շատերը, որոնց բախտ չի վիճակուել դիտելու բոլոր ժամանակների խոշորագոյն ողբերգակ Շեքսպիրի «Համլետի» էկրանաւորման հայերէն թարգմանութեան տարբերակը: Եւ գուցէ շատերն են ծանօթ ֆիլմում Համլետի սքանչելի դերակատար Ինոկենտի Սմոկտունովսկու այն խոստովանութեանը, թէ՛ հայերէն թարգմանութիւնն աւելի բարձր է, քան իր խաղը: Եւ դա՛ շնորհիւ մեծատաղանդ Խորէն Աբրահամեանի փառահեղ կրկնօրինակման, իսկ դրանից առաջ՝ շնորհիւ շեքսպիրեան գործերի անգերագանցելի թարգմանիչ Յովհաննէս Խան Մասեհեանի:

Իրանի Թեհրան քաղաքում է ծնուել թարգմանիչ, պետական-հասարակական գործիչ, դիւանագէտ, հրապարակախօս, մանկավարժ եւ խմբագիր, Շեքսպիրի, ձորճ Պայրոնի ստեղծագործութիւնների հայերէն առաջին թարգմանիչ Մասեհեանը: Նրա հայրը՝ Ծերունի աղայ Մասեհեանը, եղել է պարսից Նասրեդդին շահի արքունական ոսկերչագետը: Փոքրիկ Յովհաննէսի առաջին կրթարարը եղել է սուրբ Թադէոս-Բարթոլոմէոսի եկեղեցուն կից վարժարանը: Միջնակարգ կրթութիւնն ստացել է հայաստ Թեհրանի Հայկազեան դպրոցում եւ Թաւրիզում, ապա աւարտել Փարիզի Ֆրանսական քոլեճը:

Տիրապետելով բազմաթիւ լեզուների՝ հայերէն, պարսկերէն, թուրքերէն, յունարէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն, ռուսերէն՝ 20 տարեկանում նշանակուած է շահի պալատական թարգմանիչ, միաժամանակ ուսուցչութիւն անում իր ուսանած Հայկազեանում: 1887-ին, որպէս Նասրեդդին շահի պատուիրակութեան աւագ թարգմանիչ, մեկնում է Լոնտոն: 1886-ից ղեկավարում է Հայկազեան դպրոցը, ընտրուած Ուսումնասիրաց ընկերութեան նախագահ, հիմնում եւ խմբագրում է իրանահայ առաջին տպագիր պարբերականը՝ «Շաւիղ» շաբաթաթերթը: 1894-ին մեկնում է Պետերբուրգ՝ որպէս Իրանի թագաւորի պատուիրակութեան թարգմանիչ, 1897-ին՝ Լոնտոն՝ պատուիրակութեան առաջին քարտուղար: 1895-1901 թթ. Իրանի արտաքին գործերի նախարարութիւնում վարում է մամուլի բաժնի վարիչի, արեւելեան երկրների բաժնի պետի, օպերատիւ տեսչի պաշ-

տօնները՝ շարունակելով մնալ թագաւորի թարգմանիչը:

Չնայած բնութիւնը Մասեհեանին շնորհել էր գրելու, բանաստեղծելու ակնյայտ տաղանդ, սակայն նա իր ամբողջ գիտակցական կեանքը, դիւանագիտական փայլուն գործունէութեանը գոլգահեռ, նուիրելու էր թարգմանական արուեստին: Յայտնի է, որ Մասեհեանն Աւետիք Խասակեանի խորհրդով է սկսել շեքսպիրեան գլուխգործոցների հայացումը: Առաջին թարգմանութիւնը՝ «Համլետը», լոյս է տեսել 1894-ին: Դրան իւրաքանչիւր տարի յաջորդում է մի նոր թարգմանութիւն՝ «Ինչպէս կ'ուզէք», «Ռոմէօ եւ ձուլիթ», «Վենետիկի վաճառականը», «Արքայ Լիր»: Շուրջ քառորդ դար անց՝ «Օթելլոն» եւ «Մակբեթը»: Ինչպէս վկայում է երախտաշատ Ռուբէն Զարեանը՝ Մասեհեանի կատարած թարգմանութիւնները նշեալ գործերով չեն սահմանափակուած. թարգմանիչի մահից յետոյ նրա թղթերի մէջ գտնուել են ուրիշ թարգմանութիւններ եւս՝ «Անտոնիոս եւ Կլեոպատրա», «Իզուր աղմուկ», «Փոթորիկ», «Հուլիոս Կեսար», «Կորիոլան»: Սրանց հետ միասին նաեւ «Ռոմէօ եւ ժուլիթ» վերախմբագրուած թարգմանութիւնը: Վերջին երեքը լոյս են տեսել Վենետիկում եւ Թեհրանում: «Ըստ անդրանիկ կենսագրի հարողած տուեալների, գրում է Ռուբէն Զարեանը, Մասեհեանի թարգմանութիւններից վեցը՝ «Թիմոն Աթենացի», «Ձմեռային հեքիաթը», «Ինչպէս կուզէք» ու երկու այլ, մեզ անյայտ գործեր, կորել են: Նշանակում է՝ Մասեհեանը Շեքսպիրից կատարել է ոչ թէ եօթ թարգմանութիւն, ինչպէս մինչեւ հիմա էր յայտնի, այլ տասնչորս: Նկատի ունեմ՝ 12-ը, որոնք հրապարակի վրայ են եւ երկուսը, որ թէեւ կորել են, բայց յայտնի է, թէ ինչ պիեսներ են եղել...»: Դեռեւս արքունի թարգմանիչ եղած տարիների Մասեհեանը եւրոպական մի շարք գործերից թարգմանութիւններ է կատարել նաեւ պարսկերէն լեզուի:

Մասեհեանը, ըստ զբաղմունքի, դիւանագէտ էր: Երկար տարիներ դեսպանատններում բարձր պաշտօններ է վարել եւ հակառակ Պարսկաստանում ընդունուած այն կարգի, թէ՛ այլազգին, այն էլ ոչ Շար.ը էջ 15

Ուաշինգտոնում Կայացած Կրօնական Ազատութեան Միջազգային Գագաթնաժողովին (IRF) Հայց. Եկեղեցին Ներկայացրել է Արցախի Խնդիրը



Հայց. Եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի երկու՝ Արեւելեան եւ Արեւմտեան թեմերը մասնակցել են 2023 թ. Փետրուարի սկզբին Վաշինգթոնում կազմակերպուած՝ կրօնական ազատութեան միջազգային գագաթնաժողովին (IRF), որին ներկայ էին քաղաքացիական հասարակութեան անդամներ, կրօնական առաջնորդներ, գիտնականներ, լրագրողներ, պետական պաշտօնյաներ եւ այլ շահագրգիռ կողմեր:

Գագաթնաժողովի ընթացքում եւ դրանից յետոյ Ս. Էջմիածնի էքլեզիակոնիկ ներկայացուցիչ Վիգէն Արքեպիսկոպոս Ալբրեքտանին (Արեւելեան թեմ) եւ Արեւմտեան թեմի Արցախի ժառանգութեան պաշտպանութեան Յանձնաժողովի Ատենապետ Սիմոն Մաղաքեանին, որ միաժամանակ մասնակցին է «Save Armenian Monuments»-ի, միացել են այլ ղեկավարներ՝ քննարկելու համար կրօնական ազատութեան եւ մարդու իրաւունքների վերաբերյալ խնդիրները յետպատերազմեան Արցախում, յատկապէս հաշուի առնելով Ադրբեջանի կողմից Հայաստանի հետ Արցախը կապող միջանցքի շրջափակումը:

«Արեւմտեան թեմը ուրախ է համագործակցել IRF գագաթնաժողովի հետ այս տարի՝ ուշադրութեան կենտրոնում պահելու համար կրօնական ազատութիւններին եւ մարդու այլ իրաւունքներին առնչող կենսական խնդիրներն ամբողջ աշխարհում, այդ թւում՝ Արցախում», - իր ուղերձում նշել է Արեւմտեան թեմի Առաջնորդ Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանը: «Մենք ուրախ ենք, որ միջազգային շահագրգիռ կողմերի մօտ այժմ աւելի մեծ ըմբռնում կայ կրօնական ազատութեան եւ հայրի առջեւ ծառայած գոյութեան սպառնալիքների վերաբերեալ եւ յոյս ենք յայտնում, որ մեր համայնքի դաշնակիցներն է՛լ աւելի ուշադիր եւ նախաձեռնող կը լինեն իրենց ջանքերում»:

Փետրուարի 1-ին Սիմոն Մաղաքեանի իր գիտական կարգավիճակով ելոյթ ունեցաւ IRF-ի "Summit's Documenting" բաժնում՝ նուիրուած պաշտամունքի տների եւ սրբավայրերի աւերածութիւնների բացառապէս համար տեխնոլոգիաների կիրառման հարցին:

Փետրուարի 3-ին Վիգէն Արք. Ալբրեքտանը եւ Սիմոն Մաղաքեանը վարեցին բարձր մակարդակի մասնաւոր քննարկում ունեցան շահագրգիռ կազմակերպութիւնների մասնակցութեամբ, որը նախաձեռ-

նել էր Արեւմտեան թեմը եւ հիւրընկալուել Կապիտոլիումի բլրի վրայ՝ Բելմոնտ Աբբայ քոլեջի կողմից, թեման՝ աջակցութիւն Արցախում կրօնական ազատութիւններն եւ մարդու այլ իրաւունքներին: «IRF գագաթնաժողովը եւ Փետրուարի 3-ի քննարկումը շահագրգիռ կողմերի հետ եւս մէկ անգամ ցոյց տուեցին, որ կողմից-իայի կառուցումը կարեւոր է հայկական իրաւունքների պաշտպանութեան համար», - իր խօսքում նշել է Վիգէն Սրբազանը: «Մենք երախտապարտ ենք մեր գործընկերներին, որոնք մեզ հետ քննարկեցին տարբեր համայնքներում եւ այդ թւում հայ համայնքում կրօնական ազատութիւնների եւ պաշտպանութեան ներկայ վիճակն ու ապագան՝ շարունակող շրջափակման պայմաններում Արցախին համերաշխութիւն յայտնելու համար: Մենք ակնկալում ենք շոշափելի գործողութիւններ այս ճակատում»:

IRF 2023-ի գագաթնաժողովին թեմի պատուիրակութեան կազմում էր գիտնական թամար Պուրուլը: IRF գագաթնաժողովի մասնակիցներին իրավիճակը ներկայացնելու համար պատուիրակութիւնը սերտօրէն համագործակցել է իրաւաբանների հայկական ասոցիացիայի անդամ Սոնիա Ներսիսեանի հետ, ով նաեւ Արցախի ժառանգութեան Յանձնաժողովի անդամ է եւ ներգրաւուած է մշակութային ոչնչացման եւ կրօնական ազատութիւնների մասին իրաւական փաստաթղթերի ստեղծմանը:

Գագաթնաժողովին ներկայ էին նաեւ հայկական եւ համախոհ այլ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ: Այդպիսի կազմակերպութիւններից մէկը՝ Philos Project-ը, հովանաւորեց գագաթնաժողովի փակման նիստը, որը կոչոււմ էր Save Armenia, որի ժամանակ կազմակերպութեան նախագահ Ռոբերտ Նիկոլսոնը խօսեց Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերին փրկելու ԱՄՆ ջանքերի մասին եւ խնդրեց IRF գագաթնաժողովի մասնակիցներին նոյնն անել այսօր Արցախի համար, որը դիմագրաւում է Ադրբեջանի շրջափակմանը:

«Արցախի ժառանգութեան պահպանութեան» Յանձնաժողովը ստեղծուել է Հիւսիսային Ամերիկայի Հայ Եկեղեցու Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախաձեռնութեամբ, որի անդամ են նշանաւոր գիտնականներ, փորձագէտներ, հոգեւորականներ:

Հայկական Գեմարանը Տօնեց Տեառնդառաջը



Փաստենա քաղաքի Հայկական Ծեմարանը (Blair School Armenian Academy) 10 Յունուար 2023, Ուրբաթ յետմիջօրէին, իր աշակերտներով, դպրոցի վարչական կազմով եւ բազմաթիւ համակիր հիւրերով տօնեց Տեառնդառաջը:

Փաստենա քաղաքի Հայկական Ծեմարանը կը շարունակէ վառ պահել հայկական աւանդութիւնները: Անցեալ շաբաթ, Ծեմարանի աշակերտները խանդավառութեամբ տօնեցին մէկ այլ աւանդութիւն՝ Տեառնդառաջը: Անոնք օրուայ մէջ, հայերէնի դասերու ժամերուն սորվեցան Տեառնդառաջի պատմութիւնը ու լսեցին ծիսական եւ հոգեւոր գիտելիքներ: Անոնք նաեւ դիտեցին Կապան եւ Վանաձոր քաղաքներու մէջ կատարուած տօնա-

խանդավառ պարով, որոնց պարագիւրներն էին Փաթիլ եւ Սինթիա Աւպարեան քոլերը: Ապա, դպրոցի աշակերտներէն էլն Վարդանեանը եւ Արազ Քէլլէեանը շուրջպարի անդրանիկ օղակին հրաւրեցին աւարտական դասարանի աշակերտները: Աւագ դասարանի տղաներն եւ աղջիկները, գիտակցելով, թէ երեք ամիսէն հրաժեշտ պիտի տան հայկական դպրոցի ջերմ ու ընտանեկան երգիքին, ձեռք ձեռք բռնած պարեցին իրենց վերջին շուրջպարը:

Այս տարի Տրնդեզը (կամ՝ Տէրնդեզը, ինչպէս նաեւ յայտնի է ժողովուրդի մէջ) համադպրոցական մեծ փառատօնի վերածուեցաւ: Յայտագիրը նախօրօք յայտարարուած էր վարժարանի բոլոր աշակերտներուն եւ վարչութեան:



կատարութիւններու արձանագրութիւնները, որպէսզի գաղափար կազմեն, թէ Հայկական բնաշխարհի մէջ ինչ արարողութիւններով, պարերով եւ այլ սովորութիւններով կը տօնուի Տեառնդառաջը: Իսկ երբ դասերը վերջացան, բոլորը շտապեցին բակի »Հայկական Անկիւն« կոչուած վայրը՝ խարոյկի շուրջ պարելու եւ կրակի վրայէն ցատկելու համար:

Յայտագիրը սկսաւ դպրոցի պարախումբի կատարած երկու

Ուստի, նորվէկիացի, իտալացի, քորէացի, մէքսիքացի, իռլանտացի, յոյն եւ լեհ պաշտօնեաներ եւ աշակերտներ, հետաքրքիր քայլերով մօտեցան տօնակատարութեան, քանի մը տարակուսական քայլերէ յետոյ, վարպետօրէն պարեցին իրենց առաջին հայկական պարը եւ սպասելիօրէն ալ՝ համարձակութիւն ցոյց տուին եւ ցատկեցին կրակին վրայէն:

Օրը վերջացաւ հայկական սոհմիկ ուտեստներու մատուցումով:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈՓԻ ՇԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝
ՇՈՒԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Հայաստանի Մշակութային Ժառանգութիւնը Կը Ներկայացուի Հնդկաստանի Մէջ



Փետրուար 3-ին, Հնդկաստանի Ֆարիտապատ քաղաքին մէջ ընթացք առաւ Սուրաճքունտի արհեստից 36-րդ միջազգային փառատօնը:

Փառատօնին Հայաստանէն կը մասնակցին «Յովհաննէս Շարամպէանի անուան ժողովրդական արուեստից թանգարան»-ի «Արար. ազգային մշակոյթի պահպանումը, տարածումը, զարգացումն ու հանրահաղորդման մարզերուն մէջ» ծրագրին մէջ ընդգրկուած վարպետներ՝ ասեղնագործուհի Արմինէ Խաչատրեանը եւ կարպետագործութեան ուսուցչուհիներ Զարուհի Տոլուխանեանն ու Նարինէ Պօղոսեանը:

Յուցարդրութիւնը գլխաւորաբար կը ներկայացնէ հայկական գործուածքը (կարպետներ, ասեղնագործ աշխատանքներ եւ զարդակիրառական արուեստի նմուշներ): Կ'իրականացուին ձեռագործ աշխատանքներու վարպետութեան դասեր:

Հայ վարպետներուն՝ փառատօնին մասնակցութեան նպատակն է Հայաստանի ոչ նիւթական մշակութային ժառանգութեան միջազգային հանրահաղորդման, ներկայացուածութիւնը նման հեղինակաւոր հարթակով, ինչպէս նաեւ՝ վար-

պետներու ստեղծագործական գործունէութեան խթանումը:

Փառատօնին հայկական ականադական երգերու եւ պարերու կատարումներով կը մասնակցի նաեւ «Նուպար» ականադական երգի եւ պարի համոյթը:

Սուրաճքունտի արհեստից ամենամեայ փառատօններուն Հայաստանի ներկայացուցիչներուն շարունակական մասնակցութիւնը ամբողջութեամբ է 2022 թուականի յուլիս 4-ին Երեւանի մէջ տեղի ունեցած «Առեւտուրի, տնտեսական, արհեստագիտութեանց, գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի բնագաւառներէն ներս Խայ-հնդկական միջկառավարական յանձնաժողովի 8-րդ նիստի արձանագրութեան» դրոյթներուն մէջ: Փառատօնը ուղղուած է Հայաստանի եւ այլ երկրներու ժողովրդական ստեղծագործողներուն միջեւ համագործակցութեան նոր հեռանկարներու ձեւաւորման, ժողովրդական ստեղծագործութեան ճանաչելիութեան բարձրացման ու փոխհարստացման, ինչպէս նաեւ՝ Հնդկաստան-Հայաստան մշակութային համագործակցութեան խթանման՝ որպէս հնդիկ եւ հայ ժողովուրդներու մշակութային ժառանգութեան պահպանութեան լաւագոյն դրսեւորում:

Հոգեհանգիստ, Մոնավառութիւն

Շարունակուած էջ 11-էն

րու կողմէ օգտագործուող ցեղասպան եւ ցեղական լեզուի դէմ: Եւ պարզապէս զուլիւր թեքելով, երբ քաղաքացիական կորուստներ կ'ըլլան: Ասիկա հիասթափութիւն է մէկ կողմէն: Հետագոտութեան միւս կողմն ալ է, որ անձնապէս ինքը՝ Հրանդ Տինքը, դարձած է յիշատակի վայր կամ շատ կարեւոր գործիչ, որ չի սահմանափակուիր որեւէ տարիքային խումբով այս պահուն թուրքիոյ մէջ: Այսպիսով, անոր ժառանգութիւնն ու յիշատակը թուրքիոյ մէջ կը շարունակուին: Անոնք ականատես եղան ոչ թէ Պոլսոյ տարբեր խումբերու համերաշխութեանը, այլ այդ համերաշխութեան յիշողութեանը եւ համերաշխութեան դրական մտածելակերպի ընդհանուր նպատակներուն կիսելուն, ինչ որ մենք պարզեցինք հետագոտութեան մէջ, որ թոյլ տուաւ մեզ աւելի պայծառօրէն նայիլ ապագային:

Հանդիսավարուհին բեմ հրաւիրեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեանը որուն խօսքին նիւթն էր՝ «Հրանդ Տինք՝ նորարար մտածողութեան մարդը»: (Յարութ Տէր Դաւիթեանի ելոյթը տեսնել «Մասիսի» Գախորդ թիւի մէջ):

Կրկին բեմ բարձրացաւ տուտուկահար վարդանեան եւ նուագեց հայկական մեղեդիներ:

Դարձեալ Զուլի վրայ մեր հետ կապուեցաւ հեղինակ Յովսէփ Հայրենի, որ յայտնեց թէ Հրանդ Տինքի Արդարութեան եւ Ազատութեան տարեկան Շքանշանը որ Պոլսահայ Միութիւնը կը շնորհէ արժանի գտնուող անձնաւորութեան մը լաւ եւ յարգալից որոշում մըն է: Ի տարբերութիւն նախկիններուն, սա բառին բուն առումով ձօն կը հանդիսանայ պարզեւտարուողի յիշատակին որովհետեւ ան կեանքէն հեռացած է: Իր կեանքին տարած պայքարին համար եւ երախտագիտութեան դրսեւորում մը յանուն հայ ժողովուրդին, որուն հետ ան ուսուցիչ տուած էր մշտապէս: Վստահ եմ որ իր հոգին ասոր հետ մշտապէս պիտի երջանկանանայ:

Հայրենի կիսեց իր միտքերն ու զգացումները: Ան յայտնեց թէ «Ալի էրթէմը իր առած յարատեւ քայլերով իրականութիւն դարձուց: Ան՝ քսան տարի եւ ամէն տարի Ապրիլ 24ին այցելութիւն տալով Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցանելով Յեղասպանութեան զոհերու յիշատակին եւ նուիրատուութիւն ընելով այն թանգարանին, ցայտուն օրինակ մը հանդիսացաւ իր հասարակութեան: Ասիկա ջուր սիռեց նման վերաբերմունք մը տեսնելու ծարաւած սրտերուն: Փաստն էր՝ Լոս Անճէլըսէն ստացած նամակը: Անոր գործունէութիւնները չէր սահմանափակուէր Ապրիլ 24ի եւ Յունուար 19ի ոգեկոչումներուն մէջ, այլեւ՝ ան կը պաշտպանէր արդարութեան հրամայականները մինչեւ վերջին աստիճան եւ տէր կը կանգնէր առանց քաշուելու այս ուղղութեամբ տարուող պայքարին: Ալի՝ Հրանդին իրական բարեկամներէն էր: Հրանդ Տինքի անուան շքանշանը իր կենաց օրով շատ պիտի ուրախացնէր զինք, կը մաղթենք որ գոնէ իր հոգոյն ուրախութիւն պատճառէ»:

Ամպիտն մօտեցաւ դարձեալ Տոք. Աւետիքեան եւ ընթերցեց Ալի

էրթէմի կենսագրականը:

Ալի էրթէմ ծնած է Փետրուար 1, 1950ին, Թուրքիոյ Անգարայի Շէրէֆլի Գոչ Հիսար գաւառի Կէօլլի գիւղը: Ալի էրթէմ մասնաւորապէս ծանօթանալով Հայոց Յեղասպանութեան մասին, տասնամեակներու ընթացքին ան կարգաց «մարքսիզմի» հիմնական գործերը եւ այնքան իրեն զարգացուց որ ուրիշներուն սկսաւ պատմել Ռուսաստանի, Չինաստանի, Ալպանիոյ եւ Գուպայի յեղափոխական պատմութեան մասին: Նոյնպէս ընթանելով շատ ուշ հասկնալ իրենց նորագոյն պատմութիւնը այսինքն թուրքիոյ մասին: Ան սկսած է հարցնել եւ քննել թէ ի՞նչ պատահած է Հայ, Ասորի եզրիտի ազգերուն որոնք մինչեւ վերջերս կ'ապրէին թուրքիոյ մէջ: Երբ իր միտքը արտայայտել սկսաւ իր խումբի անդամներուն, կեցուածքն ու զարգացումները զարմացուց զիրենք եւ ան որակուեցաւ իբրեւ կեղծ թուրք մանաւանդ երբ ան Յեղասպանութեան ժխտումը դարձուց իր կեանքի նպատակը:

1998ին, շուրջ քսան հոգիի մասնակցութեամբ տեղի ունեցած ժողովով, պաշտօնապէս հիմնեց Յեղասպանութեան Ընդդիմադիրներու Միութիւնը: 1999 թուականէն սկսեալ, այս միութիւնը ամէն տարի Ապրիլ 24ին պատուիրակութիւն կ'ուղարկէ Հայաստանի յուշահամալիր, ծաղիկեպսակ գետեղելու եւ յարգանքի տուրք մատուցանելու Յեղասպանութեան զոհերու յիշատակին: Այս միութիւնը Ապրիլ 24ը կը համարէ «ՄԳՈՅ ՕՐ»:

2002 թուականին, Յունուար 19ին ալ աւելցաւ: Հրանդ Տինքի նահատակութիւնը խոր հետք թողուց Յեղասպանութեան Ընդդիմադիրներու Միութեան անդամներուն մօտ, մեծ գայրոյթ յառաջացնելով:

Ալի էրթէմ ամուսնացած է Սէլայ էրթէմի հետ եւ ունի երկու դուստրեր: Մահացաւ Փետրուար 12, 2021ին:

Յայտագրին վերջին բաժնով Զուլի վրայ մեզ հետ կապուեցաւ Ալի էրթէմի այրին՝ Սէլայ էրթէմը որուն ուղեւոր հակիրճ ձեռնարկ մանեց եւ հայերէն լեզուով ընթերցեց հանդիսավարուհի Ռոզա Մատթեանը:

«Պոլսահայ Միութեան յարգելի անդամներ: Յարգանքով եւ կարօտով կ'ողջունեմ բոլորը Հրանդ Տինքի յիշատակին առջեւ: Երբ լսեցի այն գարափարը թէ Հրանդ Տինքի իմաստալից պատուոյ նշանը իմ ամուսնոյս պիտի տրուի: Կրնաք երեւակայել թէ ինչպիսի խառն զգացումներ ունեցայ: Որովհետեւ իմ երկրիս մէջ կատարուած Յեղասպանութեան հետեւանքով նուան հատիկներու պէս աշխարհի չորս կողմը տարածուած հայութիւնը մեզ արժանի համարած է Հրանդ Տինքի մրցանակը ստանալու: Այս ամէն ինչէն ետք հայերուն թուրքի մը այսպիսի պատիւ մը շնորհելը շատ մեծ առաքինութիւն է: Մեծապէս զգացուած եւ շնորհակալ եմ»:

Հրաւիրուեցաւ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօզքէր, Միութեան նախկին ատենապետ՝ Սիմոն Աճըրիլայ ինչպէս նաեւ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան յանձնելու համար «Հրանդ Տինք Արդարութեան եւ Ազատութեան» տարեկան Շքանշանը, հանգուցեալ Ալի էրթէմի (յետ մահու):

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:-----
 Email:-----

ՄԱՐԱԶԴ



ՊԱՅԾԱՌ ՄԻՆԱԿՈՍԵԱՆ
(Ծնեալ՝ 23 Յունիս, 1937 Ալէյ, Լիբանան)

Սրտի դառն կսկիծով կը զուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ Պայծառ Մինակոսեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի 25 Յունուար 2023-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 18 Փետրուար 2023-ին, առաւօտեան ժամը 10:30-ին Joshua Memorial Park-808 E Lancaster Blvd. Lancaster, CA 93535 գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակը՝ Տիար Նազարէթ Մինակոսեան
- Դուստրը՝ Տէր եւ Տիկին Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան
- Թոռնիկը՝ Տէր եւ Տիկին Ռազմիկ եւ Արթինէ Տէր Դաւիթեան եւ զաւակը՝ Վան
- Թոռնիկը՝ Տէր եւ Տիկին Մասիս եւ Արագ Թորոսեան եւ զաւակները՝ Արեւ, Էլիէլ եւ Շահան
- Քոյրը՝ Մարի Շայպան եւ զաւակը՝ Ֆատի
- Քոյրը՝ Տէր եւ Տիկին Օսքար եւ Նորա Ռուանօ-Ալոզեան
- Քոյրը՝ Զապէլ Օհանեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Ժիւլիէթ Օհանեան եւ զաւակը՝ Սուզաննա
- Զարմիկը՝ Տէր եւ Տիկին Ժօզէֆ եւ Նիւրբա Շայպան
- Զարմիկը՝ Տիար Արշակ Ալոզեան եւ զաւակները՝ Շանթ եւ Նայիրի
- Զարմուհին՝ Տէր եւ Տիկին Կէրի եւ Զարի Վարժապետեան եւ զաւակները՝ Նորա եւ Արիս
- եւ համայն Մինակոսեան, Տէր Դաւիթեան, Շայպան, Օհանեան, Ալոզեան, Վարժապետեան, Յակոբեան, Թորոսեան, Թիւթիւնճեան, Տէր Սարգիսեան եւ Աշճեան ընտանիքները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ AEBU Scholarship Fund 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104 եւ Pasadena Armenian Church of the Nazarene 1500 E Washington Blvd. Pasadena, CA 91104

ԽՆԴԻՐ Ե ԴՐՈՒԱԾ ՎԱՐԿԱՔԵԿԵԼ

Շարունակուած էջ 2-էն

չեն վստահուած, այնքան չեն վստահուած, որ ասում են՝ պէտք է դիտորդներ զան, որ համոզուեն, որ դուք մեզ չէք խաբուած: Դա սովորաբար դիտորդները չեն անում, տեսուչներն են անում: Եւ Ֆրանսայից ժանդարմներ են գալու, էլի պաշտօնական տուեալների վրայ եմ յղում կատարում: Գալու են, քանի որ ՀՀ իշխանութիւնների խօսքերին չեն վստահում», - յայտարարեց խաչատրեանը, որը, փաստօրէն, «պաշտօնական տուեալ» է համարում հqaqin.az-ին՝ ատրպէյճանական պրոպագանդիստական օրգանին: «Պարզ տրամաբանութիւնն ասում է, որ եթէ եւրոպացի դիտորդները գալիս են, որ վստահ լինեն՝ Եւրոպայի վստահելի էներգետիկ գործընկեր Ատրպէյճանի դէմ ՀՀ-ն եւ ՌԴ-ն հո պատերազմ չե՞ն սկսելու, ապա ՌԴ-ն նոյնպէս շահագրգռուած պէտք է լինի, որ այդ առաքելութիւնը գայ եւ համոզուի, որ ռուսները պատերազմ չեն սկսում: Բայց ռուսական արձագանքը այն չէ, նրանց գնահատականը եւ վերաբերմունքը այդ առաքելութեանը շատ տարբեր են»: (Ի դէպ,

պարոն խաչատրեանին յիշեցնենք, որ Եւրոպայի վստահելի գործընկեր Ատրպէյճանի հետ ՌԴ-ն մէկ տարի առաջ մօտաւորապէս այս օրերին դաշնակցային փոխգործակցութեան մասին 43-կէտանոց հռչակագիր է ստորագրել): Դաշնակցական պատգամաւորը, սակայն, այդպէս էլ այլընտրանք չառաջարկեց ԵՄ դիտորդներին՝ եթէ ոչ «ժանդարմները», ապա ովքե՞ր: Խիզարկութեան պակասի հետեւա՞նք էր, թէ՞ ելոյթում լսողը՝ «բալալայկայի» հնթիւնները խլացնելու միտում՝ ասել չենք կարող: Հետեւապէս հարց է ծագում՝ ինքն ու իր խմբակցութիւնը «կողմ կ'ըլլան», որ ՀՀ սահմանները դիտարկեն ՀԱՊԿ-ի՞ դիտորդները: Այն նոյն ՀԱՊԿ-ի, որը մինչեւ այժմ չի ճանաչել Ատրպէյճանի կողմից ՀՀ որոշ տարածքների օկուպացիան՝ ՀՀ սահմանների «չճանաչուած» լինելու պատճառաբանութեամբ: Մի վերջին հարց էլ՝ արդեօք ՀԱՊԿ ասելիս պէ՞տք է հասկանալ ՌԴ, ինչպէս որ՝ «ասում ենք Լենին, հասկանում ենք պարտիս», կամ էլ հակառակը:

«CIVIC.AM»

Վարդանանցի Ոգին

Շարունակուած էջ 12-էն

Այս վճռական պատասխանին հետեւանքն էր Վարդանանց Պատերազմը: «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանով Վարդան Մամիկոնեանի՝ դեկավարութեան ներքեւ հայոց 66 հազարնոց բանակը անհաւասար ճակատամարտ մը մղեց պարսից 300-հազարնոց բանակին դէմ Աւարայրի դաշտին վրայ: Ճակատամարտի առաջին օրն իսկ հայեր ռազմապէս պարտուեցան: Վարդան եւ իր 1035 զինակիցները նահատակուեցան: Բայց Աւարայրի ճակատամարտով չվերջացաւ ահեղ պատերազմը: Այսպէս, Հայաստանի ամէն անկիւն դարձաւ ռազմադաշտ: Վարդանանց «Կրօնքի եւ Հայրենիքի համար» լօզունքը համաժողովրդական շարժումի մը բնոյթը ստացաւ: Վարդաններու նահատակումէն ետք ծնան Վահան Մամիկոնեաններ եւ 33 տարի շարունակ պայքարեցան Պարսկաստանի դէմ մինչեւ որ Վաղարշ Թագաւորը իմաստութիւնը ունեցաւ Նուարասակի Դաշնագիրը ստորագրելու: Այդ դաշնագիրը կ'ապահովէր հայ Քրիստոնէութեան անխափան շարունակութիւնը Հայաստանի մէջ: Ասիկա նշանակալից յաղթանակ մըն էր մեր ազգային կեանքին մէջ: Այս յաղթանակը նաեւ գեղեցիկ օրինակ մը եւ ներշնչումի աղբիւր

մը դարձաւ յետնորդ սերունդներուն: Վարդանանց հերոսամարտով իմաստաւորուած հայ ժողովուրդի կրօնասիրութեան եւ հայրենասիրութեան այս գոյգ իրականութիւնները իրան հանդիսացան, որ հայ ժողովուրդը գիտակցական յանդգնութեամբ կուրծք տայ աւելի քան 15 դարերու բազմապիսի բոլոր մարտահրաւէրներուն: Ո՛չ Յազկերնտներ եւ ո՛չ ալ ուրիշ բռնատէրեր կրցան արմատախիլ ընել Քրիստոնէութիւնը հայէն ու հայութեան: Վարդանանց ոգին, դարեր շարունակ, եղաւ այն հաստատուն կռուանը, յոյսի եւ հաւատքի այն խորանը՝ անդու կամքով յառաջ տանելու համար գոյապահպանումի մեր պայքարը: Այսօր ալ, 21-րդ դարու առաջին քառորդին, եթէ կը հաւատանք թէ տակաւին կորսնցուցած չենք մեր կրօնասիրութեան եւ ազգասիրութեան բազմերակի զարկը՝ պէտք է անգիշող պայքար մղենք յանուն քրիստոնէական եւ ազգային մեր բոլոր սրբութիւններուն՝ առանց սակարկելու մեզմէ պահանջուած գոհողութիւնները: Արդ, մեզի կը մնայ այս նոր դարուն եւ պայմաններուն համապատասխան աշխատածեւ գործադրել գորացնելու համար հայ կեանքի հաւատքի եւ հայրենասիրութեան գոյգ թեւերը:

Որպէս Անգլիական Հանճարի Լիազօր

Շարունակուած էջ 12-էն

մահմետականը, չի կարող պետութիւնը ներկայացնել մէկ այլ պետութեան առաջ, եղել է բարեկամ Պարսկաստանի լիազօր դեսպան Պեռլինում, Լոնտոնում եւ Թոքիոյում: Վարած պաշտօնները նրան ոչ միայն պատիւ ու հեղինակութիւն են բերել, այլեւ այնպիսի արտօնութիւններ, որոնց հազուադէպ են արժանացել ոչ մահմետականները, յամենայնդէպս, Պարսկաստանում: «Եւ, այնուամենայնիւ, - ընդգծում է խորագրիտակ Ռուբէն Զարեանը, - իման Մասեհեանի անունը մեր գրականութեան մէջ անմահանալու էր ոչ թէ նրան արուած այդ պատիւների շնորհիւ, այլ շեքսպիրեան թարգմանութիւնների: Եթէ իմ միտքը կամենամ պատկերաւոր արտայայտել, ապա պէտք է ասեմ, որ այդ, նա որպէս դեսպան անմահացաւ, բայց որպէս անգլիական հանճարի լիազօր դեսպան՝ հայութեան մէջ...»: Անուրանալի է այս մեծ հայորդու երախտիքը պարսկական դպրոցների հիմնադրման եւ ընդարձակման գործում: Նրա նախածեռնութեամբ է 1899-ին Թեհրանում բացուել քաղաքական գիտութիւնների դպրոցը, որտեղ եղել է միջազգային իրաւունքի եւ ընդհանուր պատմութեան ամպիոնի վարիչը եւ դասախօսը: 1901-ին սկսուելու էր նրա կեանքի եւրոպական փուլը, որը նշանակալից էր ոչ

միայն դիւանագիտական աշխատանքի, այլեւ ստեղծագործական եւ ազգային-հասարակական-քաղաքական գործունէութեան տեսակէտից. նոյն այս թուականին նշանակուած է Գերմանիայում Իրանի դեսպանի խորհրդական, 1905-ին՝ գործերի հաւատարմատար: Իրանը ներկայացնում է միջազգային միջառն խորհրդաժողովներում՝ Պեռլին, Փարիզ, Լոնտոն, այլուր: 1912-ին դեսպան է նշանակուում Գերմանիայում, 1916-ին Լոնտոնում մասնակցում է Շեքսպիրի մահուան 300-ամեակի հանդիսութիւններին: Նոյն թուականին մտնում է Պոլոս Նուպարի գլխաւորած հայկական ազգային պատուիրակութեան կազմի մէջ: 1927-ին նշանակուում է Իրանի դեսպան Անգլիայում, 1930-ին՝ ձաբոնի մէջ: Բուռն ու յունձքառատ կեանք, որ արարումների եւ գործունէութեան նոր շրջափուլերով կարող էր հարստանալ: Մինչդեռ անողոք է իրականութիւնը՝ մեծ հային ապրելու շատ քիչ ժամանակ էր մնացել. 1931 թ., ծանր հիւանդութեան պատճառով, հրաժարական է ներկայացնում եւ մէկ ամիս անց՝ Դեկտեմբերի 19-ին, ձաբոնի մայրաքաղաքից Թեհրան վերադառնալու ճանապարհին՝ Չինաստանի խորքին քաղաքում, մեծանուն թարգմանիչն ու լիազօր դեսպանը հրաժեշտ է տալիս երկրային կեանքին... «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680

«Արսենալ» Չկարողացավ Յաղթել «Պրենտֆորտին»

Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» իր դաշտին վրայ մրցեցաւ «Պրենտֆորտի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

«Արսենալ» 21 խաղէն յետոյ 51 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչըսթըր Սիթիէն»:

«Մանչըսթըր Եունայթըտ» Յաղթեց «Լիտզ Եունայթըտին»

Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտ» հիւրընկալեց «Լիտզ Եունայթըտին» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

23 խաղէն յետոյ «Մանչըսթըր Եունայթըտը» 46 կէտով կը գրաւէ երրորդ տեղը:

«Մանչըսթըր Սիթին» Ուժեղ էր «Ասթոն Վիլայէն»

Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթին» իր դաշտին վրայ մրցեցաւ «Ասթոն Վիլայէի» հետ եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Խուբի մարզիչ Խոսեպ Գուարդիոլան 250-րդ հանդիպումը կատարեց ֆրեմիեր Լիգայի մէջ:

«Մանչըսթըր Սիթին» (22 խաղ) 48 կէտով երկրորդն է եւ առաջատար «Արսենալէն» (21 խաղ) ետ է 3 կէտ:

«Պարսելոնան» Ուժեղ էր «Վիլիառեալէն»

Սպանիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին փոխախօյեան «Պարսելոնան» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Վիլիառեալի» հետ:

Սպանացի Չաւիի գլխաւորած խումբը յաղթեց նուագագոյն արդիւնքով: Միակ կողմը նշանակեց սպանացի կիսապաշտպան Պեդրի:

«Պարսելոնան» 56 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 11 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան Մատրիտի «Ռեալէն»:

«Նափոլին» 15 Կէտով Առաջ է «Ինթերէն»

Իտալիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» ընդունեց յետնապահ «Կրեմոնէզէին» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

«Ինթեր» Հենրիխ Միխիթարեանի հետ հաւասարեցաւ «Սափաստորիայի» հետ՝ 0:0 արդիւնքով:

Այժմ «Նափոլին» 59 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 15 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ինթերէն»:

ՊՍԺ-ն Կրեց Երկրորդ Յաջորդական Պարտութիւնը

Ֆրանսայի առաջնութեան 23-րդ հանգրուանին ՊՍԺ-ն հիւրընկալեց «Մոնաքոյին» եւ կրեց երկրորդ յաջորդական պարտութիւնը՝ 1:3 արդիւնքով:

Հանդիպումը վնասուած քներու պատճառով չմասնակցեցան յարձակողներ՝ արժենթիսցի Լիոնել Մեսին ու ֆրանսացի կիլիան Մփապէն:

ՊՍԺ-ն 54 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 7 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մոնաքոյէն»:

«Քիոլնը» Սարգիս Ադամեանի Հետ Պարտութեան Մատնեց «Այնքրախտին»

Գերմանիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին «Քիոլնը» ընդունեց Ֆրանկֆուրտի «Այնտրախտին» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

Տուպիլի հեղինակ դարձաւ թունիսցի կիսապաշտպան Էյէ Սկիրին, որուն առաջին կողմն օգնեց Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը:

Մեքսիքայի Հաւաքականը Ունի Նոր Գլխաւոր Սարգիչ

Ֆուլթոնի Մեքսիքայի հաւաքականի գլխաւոր մարզիչ նշանակուած է արժենթիսցի Դիեկո Կոկան, կը հաղորդէ այդ երկրի ֆուլթոնի ֆետերացիայի կայքը:

50-ամեայ մասնագէտը նախքան այս կը գլխաւորէր մեքսիքական «Թիլիքէսը», սակայն աշխատեցաւ ընդամենը մէկ ամիս՝ կատարելով հինգ հանդիպում:

Մեքսիկացի հաւաքականը 2022 թ. աշխարհի առաջնութեան չէր կարողացած յաղթել խմբային փուլի արգելքը: Անկէ յետոյ արժենթիսցի

«Ռեալը» 5-րդ Անգամ Ըլլալով Նուաճեց Աշխարհի Ակումբային Գաւաթը



Սպանիոյ ախոյեան եւ Եւրոպայի Ախոյաններու Լիգայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալը» 5-րդ անգամ ըլլալով հռչակուեցաւ աշխարհի ակումբային ախոյեան:

Մարտըքոյի մայրաքաղաք Ռաբաթի մէջ տեղի ունեցած եզրափակիչին Արքայական խումբը 5:3 արդիւնքով պարտութեան մատնեց Ասիոյ ուժեղագոյն խումբին՝ «Ալ Հիլալին» (Սէուտական Արաբիա):

«Ռեալ» այս տիտղոսը նուաճած էր նաեւ 2014, 2016, 2017, 2018 թուականներուն:

ՖԻՖԱ Աշխարհի Լաւագոյն Ֆուլթոնիստի Կոչման Յաւակնորդներու Եռեակը



Ֆուլթոնի միջազգային ֆետերացիան հրապարակած է 2022 թուականի աշխարհի լաւագոյն ֆուլթոնիստի կոչման յաւակնորդներու եզրափակիչ եռեակը:

The Best մրցանակին կը յաւակնին աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի եւ Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի յարձակող Լիոնել Մեսին, աշխարհի փոխախօյեան Ֆրանսայի հաւաքականի եւ ՊՍԺ-ի յարձակող կիլիան Մփապէն, Սպանիոյ ախոյեան եւ Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր Մատրիտի «Ռեալի» ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեման:

Քուէարկութեան կը մասնակցին ազգային հաւաքականներու գլխաւոր մարզիչներն ու աւագները, լրագրողներ, ՖԻՖԱ-ի կայքին մէջ գրանցուած եւ քուէարկած երկրպագուները:

Մրցանակաբաշխութիւնը տեղի կ'ունենայ ֆետրուարի 27-ին Փարիզի մէջ:

Բռնցքամարտի ԱՄՆ-ի Հաւաքականները Կը Պոյքոտեն Աշխարհի Առաջնութիւնը

Բռնցքամարտի տղամարդկանց եւ կանանց ԱՄՆ-ի հաւաքականները չեն մասնակցիր այս տարուայ աշխարհի առաջնութեանը, կը հաղորդէ ԱՄՆ-ի բռնցքամարտի ֆետերացիայի կայքը:

Պատճառը Բռնցքամարտի միջազգային ընկերակցութեան (IBA) որոշումն է Ռուսաստանի եւ Պելաուսի խումբերուն պետական դերօժով մասնակցելու իրաւունք տալու վերաբերեալ:

Բռնցքամարտի տղամարդկանց աշխարհի առաջնութիւնը պիտի կատարուի Մայիսի 1-14-ը Ուզպէքիստանի մայրաքաղաք Թաշքենտի մէջ աննախադէպ մրցանակային հիմնադրամով՝ 5,2 միլիոն տոլար:

Ախոյեանը կը ստանայ 200 հազար տոլար, արծաթէ մետալակիրը՝ 100 հազար, պրոնզէ մետալակիրը՝ 50 հազար:

Բռնցքամարտի կանանց աշխարհի առաջնութիւնը կ'ընդունի Նիւ Տեյչին (Հնդկաստան) Մարտի 15-31-ին:



Խերարտո Մարտինոն հեռացաւ Մեքսիքայի խումբի գլխաւոր մարզիչի պաշտօնէն: